Azg Ազգ

19 ՀՈԿՏԵՄԲԵՐ 2011 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 186(4804)

ISSN: 1829-1651

ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն տրվեցին ինտրիգին

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀԿ-ԲՀԿ մրցակցությունը ԲՀԿ-ի ստեղծման առաջին օրից իսկ առկա է: Երբ Քոչարյանը ստեղծում էր այդ նախագիծը, բոլորին հասկացնում էր, որ իրեն պետք է կախվածության մեջ չլինել դաշտում առկա քաղաքական ուժերից: Հիմա Քոչարյանը պաշտոնապես քաղաքական դաշտում չէ, սակայն ԲՀԿ-ի գործոնի պարագան նույնն է համարյա, ինչ ե՛ւ Քոչարյանի ժամանակ, ե՛ւ անցած խորհրդարանական ընտրություններին: Գումարած, որ դաշտի մյուս խաղացողները միշտ վախ ունեն, թե Քոչարյանն ի վերջո կվերադառնա՝ ԲՀԿ-ի միջոցով:

Ի՞նչ իրավիճակ է այժմ, ընտրություններից ընդամենը կես տարի առաջ: ՀԱԿ-ին հզորացնելու եւ լայն զանգվածների աջակցությունը նրա համար ապահովելու բոլոր ջանքերը (սկսած ՀԱԿ-ի ղեկավարների, վերջացրած որոշ մրցակիցների ջանքերով) ի դերեւ ելան փաստորեն՝ ՀԱԿ-ը զանգված ապահովող չէ, եւ ոնց երեւում է՝ ընտրությունների ժամանակ էլ ուրիշ ուժերի քվեն փոշիացնող անգամ չի կարող լինել: ՀԱԿ-ի ղեկավարները պետք է սառնասիրտ լինեն՝ ընդունելու իրողությունները եւ տղամարդու նման նայելու իրականության աչքերին: Ազնիվ լինենք ու ասենք, որ ՀԱԿ-ի առաջնորդը շատ լավ ըմբռնել էր դա վաղուց, երբ իր շուրջօրյա հանրահավաքների ժամանակ, խոսելով Քոչարյանի՝ մարած քարս լինելու մասին, հաճոյախոսել էր ԲՀԿ-ին, նշելով, թե ԲՀԿ-ի մենակ գնալը ընտրությունների կարող է մրցակցություն առաջացնել ու ավարտին հասցնել ՀՀԿ-ի մոնոպոլիան: Այս եւ մի շարք այլ ռեւեւանները ԲՀԿ-ի հանդեպ վերլուծաբանները գնահատեցին ոչ այլ բան, քան ԲՀԿ-ին ուղղված բաց առաջարկ՝ ՀԱԿ-ի հետ գործակցելու: Այլ բան, որ այդպիսի ենթադրյալ կամ հնարավոր առաջարկին ԲՀԿ-ում կամ շատ լուրջ նայել չեն կարող, կամ եթե նայեն էլ, ապա միայն այդպիսի ենթադրյալ առաջարկությունից վախեցողներին վախեցնելով քաղաքական դիվիդենտներ շահելու առումով: Իսկ Գագիկ Ծառուկյանը, որ վերջին ժամանակներս այդ կարգի եւ համանման հարցերին երբեք ուղիղ չի պատասխանել, որոշ ժամանակ առաջ միայն կայֆով էր խոսել իր խոսքին սպասողների հետ ու ասել էր, որ Ռոբերտ Քոչարյանն ունի քաղաքականություն վերադառնալու բարոյական եւ քաղաքական իրավունք:

Տես էջ 3

Վտանգավոր գտածո Արկտիկայի արեւելքում

Արկտիկայի արեւելյան մասում գիտնականները կատարել են վտանգավոր հայտնագործություն: Ռուս-ամերիկյան արշավախմբի մասնակիցները այնտեղ հայտնաբերել են ոնդացած մեթանի հսկայական հանքավերտեր: Այդ գազը, անցնելով օվկիանոսային ջրի հաստ շերտի միջով, հայտնվում է մթնոլորտում եւ, մասնագետների կարծիքով, կարող է հանգեցնել Երկրի կլիմայի ընդհանուր ջերմացմանը.

«Մենք հայտնաբերել ենք մեթանի արտանետման նոր դաշտեր: Ամենամեծ շատրվանի հատույթը մեկ կիլոմետրից ավելի է: Դա անհերեւակայելի չափ է: Ենթադրյալ պաշարների 1-2 տոկոսի ապապահարկման դեպքում մթնոլորտային մեթանի ներկայիս խտությունը կարող է բազմակի աճել, ինչը կհանգեցնի դժվար կանխատեսելի հետեւանքների», հայտարարել է արշավախմբի պետ, աշխարհագրական գիտությունների դոկտոր **Իգոր Սեմիլետովը** ՌԻԱ գործակալությանը տված հարցազրույցում:

Գիտնականները պնդում են, որ արդեն այժմ Արկտիկայում դիտվում են ընդհանուր ջերմացման նշաններ: Օրինակ, վերջերս կտրուկ ավելացել է փոքրակալի օրերի քանակը, իսկ ջրի ջերմաստիճանը անսովոր բարձր է տարվա այս ժամանակվա համար: Բացի դրանից, դանդաղում է սառցագոյացումը:

Մ. ՆԱՀԱՆԳԵՐ

Հյուսիսային Կալիֆոռնիայում քննարկել են Արցախի ինքնորոշման իրավունքի հարցը

Լեռնային Ղարաբաղի անկախության 20-ամյակի առիթով Ամերիկայի հայկական համագումարի Հյուսիսային Կալիֆոռնիայի շրջանային խորհուրդը Օկլենդի Սուրբ Վարդան հայկական եկեղեցում կազմակերպել է քննարկում, որին, ըստ համագումարի մամլո գրասենյակից ստացված հաղորդագրության, մասնակցել է Մ. Նահանգներում ԼՂ Հանրապետության ներկայացուցիչ Ռոբերտ Ավետիսյանը: Ելույթներով հանդես են եկել նաեւ «ՀԱԼՌ» տրեստի փոխնախագահ Էնդրու Լայոնզը եւ Ամերիկայի հայկական համագումարի գործադիր տնօրեն Բրայան Արդունին:

Վերջում հարց ու պատասխանի ձեւով պարզաբանումներ են տվել քննարկված նյութի շուրջը:

Հ. Ծ.

Հայաստանի Ազգային ժողովի պատվիրակության հանդիպումները Բեռնում

Միջխորհրդարանական միության նախագահի եւ Շվեյցարիայի Համադաշնության Ազգերի խորհրդի եւ Պետությունների խորհրդի նախագահների հրավերով հոկտեմբերի 16-ին ՀՀ ԱԺ նախագահ Հովիկ Աբրահամյանի գլխավորած պատվիրակությունը Բեռնում մասնակցեց Միջխորհրդարանական միության հոբելյանական 125-րդ վեհաժողովի բացման արարողությանը: ԱԺ նախագահի գլխավորած պատվիրակության կազմում են Միջխորհրդարանական միությունում ԱԺ պատվիրակության անդամներ Հեղինե Բիշարյանը, Անահիտ Բախշյանը եւ Միքայել Վարդանյանը: ԱԺ հասարակայնության հետ կապերի վարչությունը մանրամասներ է փոխանցել վեհաժողովի ընթացքի եւ մեր պատվիրակության հանդիպումների մասին:

Վեհաժողովի մոտ 1500 մասնակիցներին ողջունեցին Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղար Բան Կի Մունը, Շվեյցարիայի Համադաշնության նախագահ Միշլին Կալմի-Ռեյը, Միջխորհրդարանական միության նախագահ Թեո-Բեն Գուրիրաբը եւ ուրիշներ:

Միջխորհրդարանական միությունում ԱԺ պատվիրակության անդամներ Հեղինե Բիշարյանը, Անահիտ Բախշյանը եւ Միքայել Վարդանյանը մասնակցել են Միջխորհրդարանական միության ղեկավար խորհրդի նիստին, որի ընթացքում քննարկվել են ՄՄ-ին անդամակցությանը վերաբերող հարցեր, ներկայացվել Միջխորհրդարանական միության 2012 թ. ծրագիրը եւ բյուջեի նախագիծը, 2012-2017 թթ. ռազմավարությունը եւ այլ հարցեր: Նիստի ընթացքում ներկայացվել է ՅՈՒՆԻՍԵՖ-ի եւ ՀՀ Ազգային ժողովի կազմակերպած՝ Արեւելյան եւ Կենտրոնական Եվրոպայի, ինչպես նաեւ ԱՊՀ երկրների պատգամավորների մասնակցությամբ հունիսի 14-16-ին Հայաստանի խորհրդարանում կայացած երեխաների իրավունքներին նվիրված տարածաշրջանային համաժողովի արդյունքները:

ՄՄ ղեկավար խորհրդի նիստից հետո տեղի է ունեցել միջխորհրդարանական միության 125-րդ վեհաժողովը, որին մասնակցել է նաեւ մեր ԱԺ պատվիրակությունը՝ Հովիկ Աբրահամյանի գլխավորությամբ:

Նույն օրը տեղի է ունեցել Միջխորհրդարանական միության վեհաժողովի Եվրասիա աշխարհաքաղաքական խմբի նիստը, որը նախագահում էր ԱԺ պատվիրակության անդամ Միքայել Վարդանյանը: Նիստի ընթացքում իրենց ծրագրերը ներկայացրել են Միջխորհրդարանական միության նախագահի թեկնածուներ, Ինդոնեզիայի խորհրդարանը ներկայացնող տիկին Նուրհայատի Ալի Ասեգաֆը եւ Մարոկկոն ներկայացնող Աբդելվահադ Ռադին: Նշենք, որ Միջխորհրդարանական միության նախագահի ընտրությունները տեղի կունենան այսօր, վեհաժողովի լիագումար նիստում:

Ձերբակալվել է ՊՆ զինվորական հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքի պետը

Ինչպես տեղեկացանք պաշտպանության նախարարության քննչական ծառայությունից, ՀՀ զինվորական դատախազության, ոստիկանության քրեական հետախուզության գլխավոր վարչության ու ՊՆ իրավապահ մարմինների համատեղ օպերատիվ աշխատանքի արդյունքում, հոկտեմբերի 17-ին ՀՀ քրեական օրենսգրքի 311 հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցագործության կասկածանքով ձերբակալվել է ՀՀ ՊՆ Երեւանի կայազորի զինվորական հոսպիտալի հոգեբուժական բաժանմունքի պետ, բժշկական ծառայության մայոր Վաղինակ Հովհաննիսյանը: Վերջինս իր բաժանմունքում գտնվող զինծառայողի առողջական վիճակը թեթեւ ներկայացնելու համար 2000 ԱՄՆ դոլար կաշառք է վերցրել մի քաղաքացուց: Նախաքննության ավարտից հետո պարզ կդառնա՝ այդ դեպքը միակն է, թե մինչեւ այժմ նման դեպքեր նույնպես եղել են: Մոտ երեք տարի առաջ «**Ազգը**» անդրադարձել էր նման մի դեպքի, երբ զորամասում զինվորին (Շավարշ Օնիկի Մակարյան) սպան այնքան էր ծեծել, որ 1 ամիս հայտնվել էր հոսպիտալի նույն բաժանմունքում: Եվ այդ գործն էլ կոծկվեց, ու որեւէ մեկը չպատժվեց:

Մ. Մ.

«Մազը՝ երկար, խելքը կարճ է»

Ադրբեջանի խորհրդարանի փոխխոսնակ Բահար Մուրադովան «հանդես է եկել նախաձեռնությամբ» եւ առաջարկել, որ «ԼՂ հայկական եւ ադրբեջանական համայնքների ներկայացուցիչները հանդիպեն»: Նրա խոսքերով, իր «առաջարկությունը դրական է ընդունվել ԵԱՀԿ ԽՎ նախագահ Պետրոս Էֆտիմումի եւ Հարավային Կովկասում վերջինիս ներկայացուցիչ Ժոան Սուարեսի կողմից»: Միաժամանակ նա ընդգծել է, որ «հանդիպման իրականացման տեղը եւ ժամկետները հայտնի չեն»:

Նման «հանդիպման» մասին ոչ որ ոչինչ չգիտի նաեւ Լեռնային Ղարաբաղում: Ուստի մնում է ենթադրել, որ խանըմ պատգամավորն առավելագույնը իր նշած անձանց կամ նրանցից մեկի հետ «տրիվաս» հանդիպման ժամանակ, հնարավոր է, հերթական «կոնստրուկտիվ առաջարկությունն» է հնչեցրել: Բանն այն է, որ ուկրաինական լրատվամիջոցներից մեկին տված հարցազրույցում Ադրբեջանի փոխարտգործնախարար Արազ Ազիմովն ասել էր, թե իր երկիրը «չի խուսափում ԼՂ հայերի հետ շփումներից»: Եվ Բահար խանըմն, ըստ էության, «սեփական կոնստրուկտիվ նախաձեռնությամբ» ձգտում է «հավաստիություն տալ» իր երկրի փոխարտգործնախարարի «հանդուրժողականությանը»:

Այդուհանդերձ, «գերժամանակակից» Բաքուն ներկայացնող տիկին պատգամավորը չի կարողացել զսպել «մեծապետական» հակումներն ու այսպիսի միտք էլ է հնչեցրել. «Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունն Ադրբեջանի քաղաքացիներ են եւ ցանկալի է, որ նման հանդիպում անցկացվեր Բաքվում: Բայց եթե դա նրանց համար խնդրահարույց է, ապա հնարավոր է նաեւ այլ տեղ ընտրել»:

«Քաղաքացիության եւ հարակից հարցերի շուրջը» Բահար խանըմի «զեղումները» կարելի է թերեւս «կանացի թուլության» առհավատյա համարել: ԼՂՀ ընտրյալ ներկայացուցիչներն, ամենայն հավանականությամբ, տիկին պատգամավորի՝ Բաքվում նրանց հյուրընկալելու անտեղիտալի ցանկությանը կարող էին նույնիսկ ընդառաջել, եթե չլիներ մի իրավական խոչընդոտ. իրականում ԼՂ «ադրբեջանական համայնքն» է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիների ամբողջություն: Եվ եթե այդ մարդիկ ինչ-ինչ խնդիրներ ունեն՝ կապված այդ կարգավիճակն օրինականացնելու եւ ԼՂՀ հանրային-քաղաքական կյանքում ինտեգրվելու՝ իրենց համար բաղձալի հեռանկարի հետ, ապա հանդուրժելի կլիներ, եթե նրանք Ստեփանակերտ ժամանելու եւ տեղում հուզող հարցերի պատասխանն ստանալու նախաձեռնություն ցուցաբերեին:

Թե չէ, որքան էլ բառախաղ անեն, տղամարդկանց չի պատշաճում թաքնվել Բահար խանըմի փեշի տակ: Մանավանդ որ, դատելով տիկին պատգամավորի խոսքերից, նա այդ հնարավորությունն ու ցանկությունը բոլորովին չունի: Պարզապես հանձնարարել են՝ ինչ-որ «բան» ասում է: Ուղղակի, ինչպես ժողովուրդն է ասում, «մազը՝ երկար, խելքը կարճ» կին է:

ՎԱՀԲԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ԱԶԳ **Ընթացիկ**

Հատուկ ազդանշաններ Ելիսեյան պալատից Բաքվին, Անկարային եւ...

Պատկերացնենք այսպիսի մի իրավիճակ. Փարիզի Ելիսեյան պալատում նախագահ Սարկոզին ելույթ է պատրաստում, որը պետք է ունենա ֆրանսահայության առջեւ: Բնականաբար նա այդ ելույթը պատրաստում է խորհրդականների թիմի հետ: Դիտարկենք, թե Սարկոզին անձամբ պահանջում է խորհրդականներից իր ելույթի տեքստում ներառել հետեւյալ նախադասությունը. «Թուրքիան անցյալ դարի սկզբին իրականացրել է հայերի ցեղասպանություն, այո՝ դա հենց ցեղասպանություն է, եւ Թուրքիան, որը ԵՄ-ում տեղ չի կարող ունենալ՝ չնայած ունեցած մեծ դերին, հնարավորինս շուտ պետք է պատասխան տա իր իսկ իրագործած ցեղասպանության համար»: Խորհրդականները, բնականաբար, խորհուրդ են տալիս նախագահին՝ «Այդպես մի արեք, քանի որ կզայրացնեք Անկարային», ինչին Սարկոզին պատասխանում է՝ «Հանգիստ եղեք, թուրքերն արդեն իսկ ատում են ինձ»: Իրականում այս ամենը պատկերացնելու բան էլ չէ, քանի որ ֆրանսիական մամուլից մեջբերելով՝ այս մասին տեղեկացրեց թուրքական NTV հեռուսաալիքությունը, ինչի մասին «**Ազգը**» արդեն տեղեկացրել է: Մենք տեղեկացրել ենք նաեւ, որ Ֆրանսիայի նախագահը, համաձայն Wiki-Leaks-ի, «տանել չի կարողանում թուրքական դրոշը, եւ երբ անցյալ տարի էյֆելյան աշտարակը լուսավորված է եղել այդ դրոշի գույնով, Սարկոզին հրաժարվել է նայել աշտարակը»: Հետեւաբար ամենեւին էլ պատահական չէ, որ հենց Սարկոզին է, ճիշտ է Գերմանիայի կանցլեր Անգելա Մերկելի հետ միասին՝ սկզբունքորեն դեմ Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցությանը, ու հենց Սարկոզին էր, որ կասարեց ամենակարճաժամկետ պաշտոնական այցը մյուս թուրքական պետություն՝ Բաքու. Ֆրանսիայի նախագահը Բաքվում, ինչպես արդեն նշել ենք, եղավ ուղիղ 2 ժամ 40 րոպե: Պատահական չէ նաեւ, որ Բաքվից Ֆրանսիայի նախագահին ճանապարհեց ոչ թե նախագահ Իլհամ Ալիեւը, ինչը պահանջում է պաշտոնական այցի արարողակարգը, ոչ էլ անգամ վարչապետ Արթուր Ռասիզադեն, ինչն էլի ընդունելի կլիներ, ճիշտ է, ոչ Ֆրանսիայի նման տերության համար, այլ փոխվարչապետ Յակուբ Էյուբովը: Սա դեռ բավական չէ՝ թուրք-ադրբեջանական քաղաքական գործիչները, փորձագետ-վերլուծաբանները սկսեցին «կշտամբել» Սարկոզիին իր՝ «հակաիսլամական, հակաթուրքական» սկզբունքների ֆոնին ունեցած հայամետության մեջ: «**Ազգը**» նախորդ համարներում մանրամասն գրել է Ֆրանսիայի նախագահին ուղղված Թուրքիայի վարչապետ Թայիփ Էրդողանի, ԱԳ նախարար Ահմեդ Դավութօղլուի եւ այլոց քննադատությունների մասին: Մենք նաեւ տեղեկացրել ենք, որ ադրբեջանական ՋԼՄ-ներն ու փորձագիտական դաշտը, ոչ պակաս թուրքականից, Սարկոզիին «ոչ պաշտոնապես» անվանեցին Ադրբեջանի թշնամի, եւ որպես սրա ածանցյալ՝ բարձրացրին ԵԱՀԿ Մինսկի խմբում Փարիզի նախագահության ոչ նպաստակահարմարության հարցը:

Հենց այս իրադարձությունների ֆոնին, իսկ եթե ավելի անկեղծ՝ Ֆրանսիայում գալիք տարի կայանալիք նախագահական ընտրությունների համապատկերում, երբ այդ երկրի սոցիալիստները արդեն իսկ հայտարարեցին, որ իրենց թեկնածուն Ֆրանսուա Օլանդն է, որը ֆրանսահայերին խոստացել է իրականացնել Հայոց ցեղասպանության ժխտումը Ֆրանսիայում, Երեւանում ասուլիս տվեց Ֆրանսիայի դեսպան Անրի Ռենոն՝ եւս մեկ անգամ շեշտելով, որ այն, ինչ ասել է նախագահ Սարկոզին Երեւանում՝ կապված Հայոց ցեղասպանության, դա Թուրքիայի ճանաչման անհրաժեշտության ու Անկարայի ԵՄ-ին անդամակցելու առումով՝ «նախագահ Սարկոզիի խոր համոզմունքն են»: Հիշեցնենք, որ, փաստորեն, Ֆրանսիայի նախագահի «խոր համոզմունքն են»՝ «այո, դա հենց ցեղասպանություն է», ընդ որում՝ «ցեղասպանություն» բառը՝ հայերեն, «Եթե Թուրքիան շարունակի ժխտել Հայոց ցեղասպանությունը, ապա Ֆրանսիան ավելի առաջ կընթանա ցեղասպանության դատապարտման հարցում, օրինակ՝ կիրեականացնի հայերի ցեղասպանության ժխտումը Ֆրանսիայում», եւ վերջապես՝ «Թուրքիան, գտնվելով Փոքր Ասիայում, մեծ դեր է խաղում Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ, սակայն այդ դերը ԵՄ-ում չէ»: Ահա, ուրեմն, այսպիսի «խոր համոզմունքներ» ունեցող նախագահի թեկնածու պետք է իր տեսադաշտում ունենա կեսմիլիոնանոց ֆրանսահայությունը՝ գալիք տարվա ընտրություններում:

Դեսպան Ռենոն, արդեն կապված ԼՂ հիմնահարցի հետ, հանդես եկավ տվյալ պահի համար բավական ուշագրավ ընդգծմամբ. «ԼՂ հիմնահարցը պետք է կարգավորվի ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում: Ինչպես Ֆրանսիան, այնպես էլ Եվրամիությունը հակված են այս ձեւաչափին»: Հիշեցնենք, ընդամենը օրեր առաջ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը «Ալ Ջազիրա»-ին տված հարցազրույցում նեղսրտեց «Մինսկի խմբի աշխատանքների անարդյունավետությունից», դե իսկ Բաքվում չեն դադարում խոսակցությունները այդ ձեւաչափը փոփոխելու ուղղությամբ: Հետեւաբար՝ դեսպան Ռենոյի ընդգծումը խիստ նշանակալից է:

Բաքվին ու Անկարային Փարիզը պատասխանեց ոչ միայն Երեւանում իր դեսպանի միջոցով: Հոկտեմբերի 17-ի երեկոյան Ֆրանսիայի նախագահը նամակ ուղարկեց Հայաստանի նախագահին՝ շնորհակալություն հայտնելով վերջինիս՝ բարձր մակարդակի ընդունելության համար: Ուշագրավ է, որ նույն այցելության ընթացքում Սարկոզին այցելել է, Երեւանից բացի, նաեւ Բաքու ու Թբիլիսի, սակայն «շնորհակալական նամակներ» Ելիսեյան պալատից ո՛չ Ալիեւը, ո՛չ Սաակաշվիլին չեն ստացել: Ինչեւէ, նամակում Սարկոզին ընդգծում է. «Իմ պետական այցից նախեւառաջ մնացել է այն խոր հուզմունքի զգացումը, որն առրեցի Ցեղասպանության հուշահամալիրի մոտ՝ 1915-ի ապրիլի 24-ին Ձեր ժողովրդի դեմ իրագործված մահավճռի զոհերի հիշատակին հարգանքի տուրք մատուցելիս: Վստահ եղեք, որ Ֆրանսիան չի դադարի իր հանձնառությունը այնքան ժամանակ, քանի դեռ այդ ջարդերը հարկ եղածին պես չեն ճանաչվել իրականացնողների ժառանգների կողմից»: Վստահաբար այս ընդգծումը Սարկոզիին «հայելու առջեւ» ուղարկող Էրդողան-Դավութօղլու զույգի համար է, ինչպես նաեւ, անշուշտ, ֆրանսահայերին ուղղված հստակ մեսիջ: Այնուհետեւ Սարկոզին, նշելով, որ «Ֆրանսիան Հայաստանին իր բարեկամն ու քույրն է համարում», շեշտում է. «Վստահ եղեք, որ Ֆրանսիան անշեղորեն Ձեր կողքին է՝ Ձեր երկրի առջեւ ծառացած մարտահրավերներին դիմագրավելու եւ, առաջին հերթին, Լեռնային Ղարաբաղի հակամարտության՝ բանակցությունների միջոցով կարգավորման ճանապարհին», սա արդեն հստակ սլաքներ ունի՝ ուղղված դեպի Բաքու. ուրեմն Ֆրանսիան ոչ միայն «անշեղորեն Հայաստանի կողքին է», այլեւ մեր կողքին է՝ «առաջին հերթին ԼՂ-ի հակամարտության՝ բանակցությունների ճանապարհով լուծման ճանապարհին»: Վերջում նախագահ Սարկոզին, դիմելով Հայաստանի նախագահին «սիրելի Սերժ» անունով, ընդգծում է. «Հայաստանին ցանկանում եմ խաղաղ ու բարեկեցիկ ապագա, որի իրավունքը նա նվաճել է, եւ մաղթում եմ, որ երկրի ղեկավարի Ձեր առաքելությունը պսակվի հաջողությամբ, որին իրավամբ արժանի եք»:

Ահա եւ Փարիզի բարձրաստիճան պատասխանը զույգ թուրքական պետություններին, ընդ որում, ուշագրավ է, որ ադրբեջանական vesti.az կայքը Սարկոզիի նամակը Սարգսյանին տեղադրել էր հետեւյալ խորագրով. «Ֆրանսիան Հայաստանին համարում է իր քույրը»:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

«Գյուղացին անզոր է միայնակ լուծելու բոլոր խնդիրները»

«Վիվասել-ՄՏՍ»-ն գյուղատնտեսությանն աջակցելու պատասխանատվություն է ստանձնել

Հայաստանի անկախության 20-րդ տարեդարձին նվիրված հայ ֆերմերների «Հայագրոֆորում» համաժողովի եզրափակիչ իրադարձությունը կիրակի օրը կազմակերպված բերքի տոնն էր՝ գյուղատնտեսական ապրանքների ցուցահանդեսով եւ համտեսմամբ:

«Գյուղացին ազգը կերակրողն է: Սակայն նա անզոր է միայնակ լուծելու բոլոր այն խնդիրները, որոնք խոչընդոտում են ցանկալի արդյունք արձանագրելուն: «Վիվասել-ՄՏՍ»-ն այս ոլորտին աջակցելու պատասխանատվություն է ստանձնել տարիներ առաջ: Բերքի անհարկի կորուստից գյուղացուն պաշտպանելու եւ բնության անկանխատեսելի ներգործությունից խուսափելու ջանքերին էին ուղղված տարբեր մարզերում հակակարկտային կայանների տեղադրումը», ասել է «Հայագրոֆորումի» գլխավոր գործընկեր «Վիվասել-ՄՏՍ»-ի գլխավոր տնօրեն **Ռալֆ Յիրիկյանը**:

Ա. Մ.

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Դիտավան գյուղում նոր դպրոց է կառուցվում

«Հայաստան» համահայկական հիմնադրամը Տավուշի մարզում սկսել է կառուցել Դիտավան գյուղի դպրոցը: Ծրագիրը հովանավորում են արգենտինահայ Արմեն եւ Նաստիա Էխեերձիյանները, ովքեր 2007 թվականից սկսած ավելի քան 300 մլն դրամի ներդրում են կատարել սասենյակ, փոքր մարզադահլիճ: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է նաեւ դպրոցն ամբողջովին կահավորել եւ ապահովել համակարգիչներով ու համապատասխան սարքավորումներով: Դպրոցի ջեռուցումն իրականացվելու է գյուղի նորակառույց գազատարից:

120 տնտեսություն ունեցող Դիտավան համայնքում: Ըստ «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Արա Վարդանյանի՝ Էխեերձիյան ամուսինների շնորհիվ դիտավանցին ունի խմելու ջուր, գազ, վարչական ու ժամանցի կենտրոն, իսկ դպրոցի կառուցումն էլ եւս մեկ խթան կդառնա գյուղի համալիր զարգացման համար: Կառուցվող երկհարկանի դպրոցը նախատեսված է 60 աշակերտի համար, կունենա 8 դասասենյակ, լեզվի լաբորատորիա, գրադարան, սպորտի դահլիճ, ճաշարան: Դպրոցի առաջին հարկն արդեն կանգնեցված է, ընթացքում են երկրորդ հարկի կառուցման աշխատանքները:

Դիտավանի ներկայիս դպրոցի շենքը 1950-ականներին կառուցված շինություն է՝ 4 հին մետաղե կցակառույցներով, ուր հաճախում է 42 երեխա: Ուսումնական գործընթացը ստանալուց հետո աշակերտներն ուսումը շարունակում են հարեւան Ազատամուտ համայնքի դպրոցում, որը Դիտավանից 2 կմ է հեռու:

28 խանութում հայտնաբերվել է ժամկետանց սնունդ

Գյուղատնտեսության նախարարության սննդի անվտանգության պետական ծառայության սննդի անվտանգության եւ որակի վերահսկողության տեսչությունից խոստանում են առաջիկա 10 օրվա ընթացքում հրապարակել 45-օրյա մշտադիտարկման արդյունքները: Սննդի անվտանգության եւ որակի վերահսկողության տեսչության պետ Արթուր Վարժապետյանի փոխանցմամբ՝ հիմնականում ուսումնասիրել են արագ փչացող սննդի անվտանգությունը: Մշտադիտարկումն անցկացվել է համաձայն եվրոպական «ռիսկայնության» մեթոդոլոգիայի: Ուսումնասիրության արդյունքները պետք է հիմք հանդիսանան 2012-ից երկրի ձեռնարկություններում ռիսկայնության գործոնը՝ ցածր, միջին եւ բարձր, հաշվի առնող ստուգումների անցկացմանը:

Վերոնշյալ մշտադիտարկման ընթացքում ուսումնասիրվել է 2.300 պարենային խանութ, որոնցից 80 տոկոսում հայտնաբերվել են անհամապատասխանության դեպքեր, որոնք հիմնականում վերաբերել են պիտակի վրա պիտանիության ժամկետին, ստանդարտի կամ տեխնիկական պայմանի համարը նշելուն: Տեսուչները ժամկետանց մթերքի վաճառքի 28 դեպք են հայտնաբերել: Վարժապետյանի հավաստիացմամբ՝ 14 ընկերություններ տուգանվել են ընդհանուր 1.5 միլիոն դրամի չափով: Խանութներում գործող նորմերի համապատասխան պարենամթերքի անվտանգության համապատասխանության խախտումների համար սահմանվել է 30-300.000 դրամավարչական տույժ: 5-բալանոց սանդղակով Հայաստանում սննդի անվտանգությունը սննդի անվտանգության մասնագետը գնահատում է 3-4, հավելելով, որ եթե սուպերմարկետում հանդիպի մթերքի, որի վրա մակնշված չէ կամ չի երեւում պիտանիության ժամկետը, ապա կհրաժարվի գնում կատարելուց:

«Ազգ»-ի հարցին՝ տեսչությունը մոնիտորինգի ենթարկե՞լ է ալկոհոլի շուկան եւ հատկապես կեղծված օղիների վերաբերյալ ինչպիսի՞ որոշում է կայացրել, Վարժապետյանը «Պոստ Սկրիպտում» ակումբում երեկ ասաց, որ վերոնշյալ մշտադիտարկումը վերաբերում էր միայն արագ փչացող սննդամթերքին: Նրա խոսքերով՝ տեսչությունը ալկոհոլի շուկան առանձին մշտադիտարկման է ենթարկել, սակայն շուկայում կան առավել կարեւոր ու հուզող հարցեր, քան կեղծված ալկոհոլը: Վարժապետյանի մեկնաբանությամբ՝ իրենք չեն լսել դեպքեր, երբ կեղծված ալկոհոլից մարդիկ թունավորվում են: Լրագրողներից մեկն էլ ասաց, որ զրուցել է բազմաթիվ բժիշկների հետ, ովքեր փաստել են, որ ունեցել են կեղծված ալկոհոլից թունավորված հիվանդներ: Մեկ այլ լրագրող էլ առաջարկեց Վարժապետյանին ուղեկցել մոտակա սուպերմարկետ ու ցույց տալ, թե ինչպես նույն սեղանին վաճառվում են ուկրաինական եւ ռուսական հայտնի արտադրանքները բավական թանկ գնով եւ դրա հայկական կեղծված տարբերակը՝ կրկնակի էժան գնով:

Հ. Հ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան Ի տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետութեան 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի

«Առավել մեծ ջանքեր պետք է ուղղվեն ոչ ֆորմալ տնտեսության դեմ պայքարին»

Հայաստանին նվիրված զեկույցը ներկայացնելով՝ նշեց Համաշխարհային բանկի ներկայացուցիչը

«Հայաստան՝ պետական ծախսերի ուսումնասիրություն. հարկաբյուջետային կոնսոլիդացում եւ վերականգնում» զեկույցը երեկ տեղի ունեցած մամուլի ասուլիսում ներկայացրին ֆինանսների նախարար **Վաչե Գաբրիելյանը** եւ Համաշխարհային բանկի Եվրոպայի եւ Կենտրոնական Ասիայի տարածաշրջանի աղքատության կրճատման եւ տնտեսական կառավարման սոցրաբաժանման (ԱԿՏԿ) տնօրեն **Իվոն Ցիկատան**:

Ներկայացնելով զեկույցը՝ Իվոն Ցիկատան փաստեց, որ համաշխարհային տնտեսական ճգնաժամին դիմակայելիս Հայաստանում ձեւավորվեց հարկաբյուջետային պակասուրդի բարձր եւ պետական պարտքի ծանր բեռի մակարդակ: Ըստ նրա, այժմ արդեն անհրաժեշտ է առաջնահերթության կարգով երկրում իրականացնել հարկաբյուջետային կոնսոլիդացում, սակայն ոչ կայուն տնտեսական աճի հաշվին:

«Հարկաբյուջետային կոնսոլիդացումը պետք է գլխավորապես իրականացվի հարկային համակարգի արդյունավետ բարեփոխումների միջոցով: Մեր տարածաշրջանում Հայաստանի հարկերի հավաքման տոկոսային ցուցանիշը ամենացածրերից է եւ անհրաժեշտ է բարձրացնել: Այդ նպատակով առավել մեծ ջանքեր պետք է ուղղվեն ոչ ֆորմալ տնտեսության դեմ պայքարին, որն, առանց գյուղատնտեսության, գնահատվում է երկրի համախառն արդյունքի 8 տոկոսի չափով», նշեց ՀԲ ներկայացուցիչը: Նրա կարծիքով, մյուս բարեփոխումները պետք է ուղղվեն ակցիզային հարկերին, հանքարդյունահանման ոլորտին եւ չափազանց մեծ հարկային արտոնություններին: Այդ բարեփոխումները կխթանեն հարկեր-ՀՆԱ հարաբերակցության երկար սպասված աճը՝ տնտեսության կայուն աճը պահպանող եւ աղքատությունը կրճատող պետական ծախսերի համապատասխան մակարդակի ֆինանսավորման համար: Իվոն Ցիկատայի գնահատմամբ, Հայաստանն արդեն իսկ ավելի քիչ ծախսեր է կատարում առողջապահության, կրթության, հանրային հատվածի աշխատավարձերի եւ ենթակառուցվածքի ուղղությամբ, հետեւաբար ծախսերի հետագա կրճատումները կարող են վնաս հասցնել աճին, թուլացնել երկրի մարդկային եւ ֆիզիկական կապիտալը եւ խաթարել հարկաբյուջետային կայունությունը: Միաժամանակ, կառավարությունը պետք է շարունակի հետամուտ լինել բարեփոխումների ողջամիտ ծրագրին՝ իր ներկա պետական ծախսերն առավել արդյունավետ դարձնելու նպատակով: ՀԲ ներկայացուցիչը նաեւ այն կարծիքը հայտնեց, որ չնայած ծանր ճգնաժամին, Հայաստանի դիրքը բավականին կայուն եւ ամուր է:

Ֆինանսների նախարար Վաչե Գաբրիելյանը, խոսելով հարկային փոփոխությունների նոր փաթեթի մասին, հայտնեց, որ այնտեղ նշված են թե՛ հարկային բեռի մեծացման, թե՛ ստվերի կրճատման հաշվին հարկային հավաքագրումների ավելացման հնարավորությունները: Նա հայտնեց, որ կառավարությունն այդ փաստաթուղթը դեռեւս չի ուղարկել Ազգային Ժողով: Ֆինանսների նախարարը տեղեկացրեց, որ այդ փաթեթում մասնավորապես նախատեսվում է ակցիզային հարկի դրույքների վերանայում: Միաժամանակ խորհրդարանում շրջանառության մեջ է գտնվում հանքարդյունաբերության մեջ հարկային ռեժիմի փոփոխության վերաբերյալ օրինագիծ, որը նույնպես կարելի է հարկային նոր փաթեթի մաս համարել:

Խոսելով երկրի արտաքին պարտքի բեռի մասին՝ Վաչե Գաբրիելյանն ասաց, որ Համաշխարհային բանկը բավարար է գնահատում արտաքին պարտքի բեռի կայունությունը: Նրա հավաստմամբ, արտաքին պարտքը հիմնականում կառավարելի է, բայց դա չի նշանակում, որ այն կարելի է ավելացնել 2-3 անգամ:

«Սպառնո՞ւմ է Հայաստանին հնարավոր նոր ճգնաժամը» հարցին պատասխանելով՝ ՀԲ ներկայացուցիչն ասաց, որ ճգնաժամի երկրորդ ալիքի դեպքում Հայաստանը շոկի չի ենթարկվի, բայց հնարավոր են երկրորդային ազդեցություններ հարկերի կամ ՀՆԱ նվազման տեսքով: Իվոն Ցիկատան նշեց, որ նախ առավել կտուժեն այն երկրները, որոնք առեւտրի մեծ ծավալներ ունեն Հունաստանի եւ Իտալիայի հետ, ապա՝ Հայաստանի բանկային համակարգի լիկվիդայնության պարագայում խնդիրներ չպետք է լինեն: Բացի սրանցից՝ Հայաստանում եվրոյով առեւտուր չի կատարվում: ՀԲ ներկայացուցչի խոսքերով՝ նման հնարավոր ճգնաժամը կազդի հիմնականում բալկանյան երկրների վրա:

ԱԲԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

Հայաստանում չեն հանդուրժում սեռական փոքրամասնություններին

Լեսբուհիների, գեյերի, բիսեքսուալների ու տրանսգենդերների (ԼԳԲՏ) հանդեպ հանրային վերաբերմունքը պարզելու նպատակով «Հանրային տեղեկատվություն եւ գիտելիքի կարիք» ՀԿ-ն ու «Սոցիոսկոպ» ուսումնասիրությունների եւ խորհրդատվության կենտրոնը Երեւանում, Գյումրիում եւ Վանաձորում սոցիոլոգիական հետազոտություն են անցկացրել:

Հարցմանը մասնակցել է 1156 անձ: Նրանց 74.5 տոկոսը կարծիք է հայտնել, որ պետական քաղաքականություն ԼԳԲՏ-ների նկատմամբ չի իրականացվում: 71.5 տոկոսն էլ հավելել է, որ պետությունը պետք է բացը լրացնի եւ պայքար սկսի նրանց դեմ: 18.6 տոկոսը «ոչ ավանդական» սեռական կողմնորոշում ունենալը բնութագրել է հիվանդություն, 12.7 տոկոսը որակել է արեւմտյան երկրների բացասական ազդեցության հետեւանք, 10.8 տոկոսը՝ դաստիարակության արդյունք: Հայաստանում կան մարդիկ՝ 9.9 տոկոս, որ կարծում են, թե մարդիկ ԼԳԲՏ դառնում են համացանցով շփվելու հետեւանքով: Քիչ տոկոս են կազմել մարդիկ, որոնց գնահատմամբ այն ձեռքբերովի է կամ պայմանավորված է հորմոնների եւ քրոմոսոնների թվով: Հարցվածների 27.4 տոկոսը վիրավորական արտահայտություններ է հնչեցրել ԼԳԲՏ անձանց հասցեին, 17.4 տոկոսը չի էլ թաքցրել բացասական վերաբերմունքը, 11.5 տոկոսի մոտեցումը հանդուրժող եւ դրական էր, 2.9 տոկոսը դրսեւորել է կարեկցական վերաբերմունք: Հարցվածների գերակշռող մասը խոստովանել է, որ պատրաստ չէ շփվել նրանց հետ, 10.9 տոկոսին անհանգստացրել է շրջապատի կարծիքը, 6.4 տոկոսը դատապարտել է նման երեւույթը: 78.1 տոկոսը խոստովանել է. կիրաժարվի շփումից ընկերոջ հետ, եթե իմանա, որ նա ԼԳԲՏ է:

Հարցումները տվել են նաեւ հարցի պատասխանը, թե ովքե՞ր են առավել հանդուրժող ԼԳԲՏ-ների նկատմամբ՝ կանա՞յք, թե՞ տղամարդիկ: «Եթե տեսնեք, որ ԼԳԲՏ անձանց ենթարկում են բռնության, կօգնե՞ք» հարցին տղամարդիկ պատասխանել են, որ անտարբեր կանցնեն, կանանց որոշակի հատվածը նշել է, որ այնուամենայնիվ կօգնի:

Ռ. Ռ.

ՀԱՅ-ՎՐԱՍՏԱՆ

Հայաստանում Վրաստանի դեսպանը երեկ այցելել է Ազգային ժողով

Աժ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Արմեն Ռուստամյանը երեկ ընդունել է Հայաստանում Վրաստանի դեսպան Թենգիզ Շարմանաշվիլիին: Ողջունելով հյուրին՝ **Արմեն Ռուստամյանը** նշել է, որ հանձնաժողովը պատրաստ է աջակցել երկու երկրների միջպետական եւ միջխորհրդարանական հարաբերությունների ամրապնդմանը եւ խորացմանը: Բարձր գնահատելով երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը՝ Ա. Ռուստամյանը հույս է հայտնել, որ նոր դեսպանի հետ հնարավոր կլինի համատեղ լուծումներ գտնելու ճանապարհով հաղթահարել ստեղծված խնդիրները: **Թ. Շարմանաշվիլին** կարեւորել է հայ-վրացական հարաբերությունների հետագա ամրապնդումը եւ ընդլայնումը: Զրուցակիցները քննարկել են նաեւ տարածաշրջանային, հայկական եկեղեցիներին իրավական կարգավիճակ տալու գործընթացին, կրթական ու դատական ոլորտներին, Վրաստանում ազգային փոքրամասնությունների իրավունքներին վերաբերող եւ փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Մ. Խ.

ՀՀԿ-ն ու ԲՀԿ-ն տվեցին ինտրիգին

1-ին էջից

Հիմա այս բոլորից հետո մամուլն ամեն օր համարյա տարբեր ենթադրություններ է անում, թե ԲՀԿ-ն դուրս կգա-չի գա կոալիցիայից, մենա՞կ կգնա ընտրությունների, ՀՀԿ-ն նրան կամ կպարտադրի՞ մի նոր հուշագիր ստորագրել, կամ թե արդյո՞ք հենց ՀՀԿ-ն նրան կոալիցիայից դուրս կհրավիրի: Մամուլը, փաստորեն, ամեն օր գրելով այս մասին, որոշ առումով գործընթացները շարժման էր դրդում, այնպես որ, այո, անտեսանելի շարժում կար վերը նշված հարվերում եւ նրանց հետ առնչվող գործընթացներում:

Ճիշտ է, հավերժական հարցին՝ մենա՞կ, թե՞ համագործակցությամբ է ԲՀԿ-ն մասնակցելու խորհրդարանական ընտրություններին, ավելի վաղ Ծառուկյանը ի պատասխան հերթական անգամ ասել էր. «Ես մի քանի անգամ նշել եմ, որ «Բարգավաճ Հայաստանը» միայնակ է գնալու ընտրություններին՝ ձեւավորելով սեփական ցուցակը: Մյուս կողմից, ես կրկին ուզում եմ շեշտել, որ այս վիճակից դուրս գալու համար երկրին անհրաժեշտ է ավելի մեծ կոնսոլիդացիա, համախմբում, քան նույնիսկ այսօրվա կոալիցիան է: Հավատացեք, որ երկիրը այս վիճակից դուրս բերելու համար մենք պետք է ստեղծենք այնպիսի մթնոլորտ, որտեղ չեն լինի թշնամիներ եւ հակառակորդներ: Եվ կոնկրետ ես համոզված եմ, որ սա է իրականությունը, եւ շարժվելու եմ հենց այդ սկզբունքով»: Խոստովանենք, որ բազմանշանակ պատասխան է՝ «թշնամիների եւ հակառակորդների» վերաբերյալ միասնական արտահայտության մեջ մեծ ցանկության դեպքում ՀԱԿ-ին էլ կարելի է տեղավորել, իսկ «ավելի մեծ կոնսոլիդացիայի» մեջ՝ ում ասես, կարեւորը, որ այս ասելիքի մեջ ոչինչ ժխտված կամ ոչինչ հաստատված չէր: Սակայն ամենակարեւոր հարցին Ծառուկյանն այդպես էլ չի պատասխանում դեռ՝ 2013-ի նախագահական ընտրությունների վերաբերյալ:

Այդպիսով՝ ընդդիմության դաշտը եթե ոչ ազատ, ապա գոնե վստահ կարելի է ասել՝ նվազ բնակեցված է, դա երեւում է անգամ «Ազատ դեմոկրատների» շարժերին նայելով՝ այդ դաշտի մի մասը գրավելու իր հավակնություններով հանդերձ (ցանկություններն ու իրականությունը, սակայն, տարբեր են): Այդ դաշտը գրավելու, ինչպես եւ իշխանական քաղաքական դաշտում ամերիկյան եւ ռուսական ազդեցության ուժերի խուլ պայքարը առավել քան նկատելի է, իսկ այս բոլորից ավելի կարեւոր է, որ շահելու է այն կուսակցությունը, ով տանելու է ընդդիմության անտեր մնացած ձայները: Հասկանալի է, որ դա ՀՀԿ-ն լինել չի կարող: Բոլոր մնացածները դա շահելու շանս ունեն: Այնպես որ շատ լավ հասկանալի է ՀՀԿ-ի ջանքը՝ ԲՀԿ-ին թույլ չտալ սեփական խաղերն առաջ տանելու, եւ ԲՀԿ-ի ջանքը՝ շատ ավելի ազդեցության դաշտի հավակնելու, ընդորում, մեր կարծիքով, շատ բնականոն քաղաքական ձգտումներ են դրանք:

Փաստորեն իշխանական դաշտում առկա խմորումներին պետք է նայել այս համատեքստում: Այն, որ ՀՀԿ գործադիրի նիստում անցած ուրբաթ ներքաղաքական խնդիրներ էին քննարկվում, դա հենց սկզբից գիտեին բոլորը, հետո էլ գաղտնիք չմնաց, որ ԲՀԿ-ի հետ հարաբերություններն են ուզում ՀՀԿ-ում հստակեցնել՝ դա չեն ասում, բայց առանց դրա էլ այդ բանը հայտնի է, եւ որ մինչեւ շաբաթավերջ այդ հստակությունը ՀՀԿ ղեկավարն ուզում է ունենալ ու այդպես գնալ Մոսկվա, դա էլ ինքնին հասկանալի է: Նշանակում է՝ կոալիցիայում ավելի շուտ բան կփոխվի, քան ընդդիմադիր դաշտում:

Եթե ԲՀԿ-ն դուրս գա կոալիցիայից, արդյո՞ք նոր ուժեր կփնտրի ՀՀԿ-ն նրան փոխարինելու համար, կամ արդյո՞ք ԲՀԿ-ն հաշվարկներ արել է, թե որ դեպքում կշահի՝ մնալո՞վ, թե՞ դուրս գալով (երկու դեպքում էլ շահեր կան, չնայած տրամագծորեն տարբեր ուղղություններից): Համենայն դեպս՝ մինչեւ նախագահի Մոսկվա գնալը ինչ-ինչ բաներ հաստատ կհստակվեն, հետո էլ Մոսկվայում ինչ-ինչ բաներ կհստակեցվեն: Իսկ թե մեկ շաբաթ են տվել ԲՀԿ-ին, որ նա հստակություն մտցնի իր գործելաոճում՝ մնա՞ կոալիցիայում, թե՞ դուրս գա, թե մեկ շաբաթ չեն տվել, սրա մեղքն էլ մամուլի վիզը, որովհետեւ պատշաճապես ոչ որ գոնե բերանի ծայրով այդպիսի բան չհաստատեց: Ավելին, ուզում ենք հիշեցնել ԲՀԿ վերջին համագումարից առաջ ստեղծված համանման իրավիճակը, երբ մամուլը հաթաթա տվեց, որ ԲՀԿ-ն դուրս է գալու կոալիցիայից, հուշագիր չի ստորագրելու, եւ իրավիճակն այնպես լարվեց, որ բոլորը գնացին ԲՀԿ համագումար շունչը պահած, իսկ Ծառուկյանն ընդամենն անպատշաճ զրույցում ասաց՝ եթե տեսնեմ՝ չեմ կարողանում կուսակցություն ղեկավարել, կհեռանամ:

Հիմա նույն իրավիճակն է, եւ ասենք, որ ավելի շատ մամուլն է քշփորում, ինտրիգներ լարում, քան իրականում եղածն է, եւ ընդհանրապես՝ մի քանի անգամ գրել ենք, Հայաստանի քաղաքական դաշտի առանցքային խաղացողները մամուլի միջոցով են գործընթացներ ուղղորդում, հասունացնում: Հիմա իրավիճակ հասունացրել են, ՀՀԿ-ն էլ, ԲՀԿ-ն էլ տվել են ինտրիգին, եւ իսկապես՝ այս շաբաթավերջին ինչ-որ բան գուցե հստակվի:

Աշխատանքի անվտանգության եւ առողջության պահպանման համակարգի ակնկալվող բարեփոխումներ

Անվտանգ եւ առողջության համար անվնաս աշխատատեղերի ապահովման ոլորտում պետական քաղաքականության ռազմավարական խնդիրներից է աշխատատեղերում աշխատանքի պաշտպանության շարունակական բարելավումը՝ նորմերի եւ կանոնների ներդրմանն աջակցություն ցուցաբերելու եւ դրանց պահանջների կատարման նկատմամբ արդյունավետ եւ համակողմանի պետական վերահսկողության իրականացման ճանապարհով:

Աշխատանքի վայրում աշխատողների առողջության պահպանման եւ անվտանգության ապահովման ամբողջական համակարգի ներդրման ապահովումը բխում է ՀՀ կայուն զարգացման ծրագրից եւ ՀՀ կառավարության որդեգրած սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմնական գերակայություններից:

Առողջ եւ անվտանգ աշխատանքային պայմանների ապահովման պահանջն ամրագրված է ՀՀ սահմանադրության 32-րդ հոդվածում, որի համաձայն՝ յուրաքանչյուր աշխատող ունի անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունք: Աշխատանքի վայրում աշխատողների առողջության պահպանումը եւ անվտանգության ապահովումը ՀՀ աշխատանքային օրենսդրության կարեւորագույն բաղադրիչներից մեկն է: ՀՀ աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլուխն ամբողջությամբ նվիրված է աշխատողների անվտանգության եւ առողջության պահպանման խնդիրներին: Մասնավորապես, ՀՀ աշխատանքային օրենսգրքի 245-րդ հոդվածով սահմանված է, որ յուրաքանչյուր աշխատողի աշխատավայրը եւ շրջապատող միջավայրը պետք է լինեն անվտանգ, հարմար եւ առողջության համար անվնաս, կահավորված՝ աշխատողների անվտանգության ապահովման եւ առողջության պահպանության մասին նորմատիվ իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Հայաստանում աշխատանքի անվտանգության, հիգիենայի եւ առողջության բնագավառում աշխատանքային օրենսդրությամբ նախատեսվում են աշխատավայրում առողջության պահպանման եւ անվտանգության կազմակերպման նվազագույն պահանջները, գործատուի ու աշխատողի պարտականությունները: Նախատեսված է, որ կազմակերպությունում պետք է իրականացվեն աշխատողների առողջության պահպանման եւ աշխատանքի անվտանգ կազմակերպման միջոցառումներ՝ ըստ աշխատավայրերի, վտանգավոր նյութերի, սարքավորումների տեսակների ու կիրառման եւ ըստ աշխատողների առանձին խոցելի խմբերի:

Համաձայն ՀՀ աշխատանքային օրենսգրքի 4-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի՝ աշխատողների առողջության պահպանման եւ անվտանգության ապահովման հիմնական կանոններն ու նորմերը պետք է սահմանվեն աշխատանքային օրենսդրությամբ: Սակայն մինչեւ օրս չեն ընդունվել եւ չեն գործում աշխատանքի անվտանգության եւ աշխատողների առողջության պահպանման վերաբերյալ համապատասխան իրավական ակտեր, որոնք կամբողջացնեին աշխատանքային հարաբերությունների կարգավորումն աշխատանքի պաշտպանության բնագավառում:

Հայաստանում աշխատանքի անվտանգության եւ առողջության պայմանների կանոնակարգման դաշտը դեռեւս ամբողջական չէ եւ չի համապատասխանում միջազգային չափանիշներին: Գործող նորմերն ու կանոնները շատ հաճախ կազմակերպություններում գործնականում կիրառելու տեսանկյունից էական դժվարությունների են հանդիպում, քանի որ դրանք խիստ բարդ են, անհարկի ծանրաբեռնված, կրում են խիստ տեսական բնույթ եւ չեն համապատասխանում արդի պահանջներին: Բացի դրանից, դրանք բովանդակային առումով չեն համապատասխանում նաեւ Եվրոմիության դիրեկտիվներին: Որոշ բնագավառների համար աշխատողների անվտանգության ապահովման եւ առողջության պահպանման նորմեր ու կանոններ ընդհանրապես սահմանված չեն: Մասնավորապես, ՀՀ օրենսդրությունում բացակայում է այնպիսի հիմնահարցերի կարգավորումը, ինչպիսիք են աշխատավայրում ծանր ֆիզիկական աշխատանք կատարող ու շարժական կամ ժամանակավոր աշխատավայրում աշխատողների անվտանգության ու առողջության ապահովման նվազագույն պահանջները, աշխատավայրում անվտանգության եւ առողջության վերաբերյալ ցուցանակների առկայության պահանջները եւ այլն, որոնք եվրոպական դիրեկտիվներում սպացել են մանրակրկիտ կարգավորում: Ավելին, անվտանգության հարցերի մասին աշխատողների եւ գործատուների իրազեկվածության մակարդակը եւս ցածր է, իսկ անվտանգությանը սպառնացող վտանգների եւ ռիսկերի փաստացի ասպիճանի մասին գիտելիքները տեղային են եւ ապակենտրոնացված: Ուստի, ոչ բոլոր աշխատատեղերում են մարդիկ բավարար չափով տեղյակ առկա ռիսկերի մասին: Դրանով պայմանավորված՝ հանրապետությունում առկա է արտադրական վնասվածքների իրական բարձր մակարդակ, որն իր հետ բերում է նաեւ աշխատողների առողջությանը պատճառված վնասների հատուցման համար գործատուի զգալի ֆինանսական կորուստներ:

Վերը բերված խնդիրների լուծման շրջանակներում վերջին տարիներին իրականացվել են տարբեր միջոցառումներ, ծրագրեր: ՀՀ կառավարության 2004 թվականի ապրիլի 24-ի թիվ 943-Ա որոշմամբ հաստատված Հայաստանի եւ եվրոպական համայնքների ու դրանց անդամ պետությունների միջեւ կնքված գործընկերության եւ համագործակցության համաձայնագրով կատարվել է հանրապետության օրենսդրության համեմատում Եվրոմիության դիրեկտիվների եւ նորմերի հետ: 2006թ. կատարված համեմատական վերլուծությամբ պարզվել է, որ ՀՀ օրենսդրությունում բացակայում են աշխատողների անվտանգության եւ առողջության պահանջների պահպանման վերաբերյալ հստակ եւ մանրամասն սահմանված նորմեր եւ մեխանիզմներ, որոնց կարգավորումը հիմնականում իրականացվում է միայն կոլեկտիվ պայմանագրերով կամ գործատուի մշակած իրավական ակտերով: Հետեւաբար, առաջարկվել է մշակել աշխատողների անվտանգ եւ առողջության համար անվնաս պայմանների ապահովման նորմեր եւ կանոններ նախատեսող կանոնակարգ՝ համապարփակ մեկ փաստաթղթի տեսքով, որի յուրաքանչյուր բաժնում սահմանված կոնկրետ ստանդարտները կիմնվեն աշխատանքի անվտանգության եւ առողջության պահպանության նվազագույն պահանջների վրա:

Համաձայն ՀՀ կառավարության 2009 թվականի գործունեության միջոցառումների ծրագրի՝ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությունը մշակել եւ սահմանված ժամկետներում ՀՀ կառավարություն է ներկայացրել «Աշխատողների անվտանգության ապահովման եւ առողջության պահպանման հիմնական կանոնները եւ նորմերը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը, որվելի արագ կարձագանքի աշխատանքի վայրում լուրջ վտանգների առկայության վերաբերյալ բողոքներին ու ահազանգերին՝ կանխարգելման նպատակով: ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը ոչ միայն զբաղվելու է խախտումների բացահայտմամբ, այլեւ գործունեությունը ուղղորդելու է նաեւ աշխատանքի պաշտպանության բնագավառում հանձնարարականներ տալուն, կանխարգելիչ աշխատանքների կատարմանը, շահագրգիռ կողմերին մասնագիտական անհատական եւ կոլեկտիվ խորհրդատվությունների տրամադրմանը:

Միաժամանակ, անհրաժեշտ է նկատի ունենալ, որ նախարարության կանոնադրությունը մշակվել է Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) «Աշխատանքի հարցերի կարգավորման դերի, գործառույթների, կազմակերպման մասին» թիվ 150 կոնվենցիայի եւ դրան համապատասխան թիվ 158 հանձնարարականի պահանջներից ելնելով: ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 14-ի թիվ 1821 որոշմամբ հաստատված կանոնադրության համաձայն՝

Նախարարության խնդիրներից են՝ աշխատանքի պետական կարգավորման քաղաքականության մշակումն ու դրա իրականացումը եւ աշխատանքի եւ սոցիալական պաշտպանության բնագավառում Հայաստանի Հանրապետության օրենսդրության կիրառման նկատմամբ պետական վերահսկողության ապահովումը.

Նախարարության գործառույթներից են՝ աշխատանքային օրենսդրության կատարելագործման, աշխատանքային հարաբերություններում սոցիալական գործընկերության զարգացման վերաբերյալ առաջարկությունների մշակումը, դրանց ներդրման կազմակերպումը եւ կատարման նկատմամբ մոնիտորինգը եւ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության եւ աշխատանքի իրավունքի նորմեր պարունակող այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողության իրականացումը:

ՀՀ աշխատանքի ոլորտի պետական քաղաքականության նպատակը աշխատանքային հարաբերությունների, աշխատանքի անվտանգության ապահովման, աշխատանքի որակի բարելավմանն ուղղված ընդհանուր համակարգի ստեղծումն ու դրա զարգացման ապահովումն է: Այս իմաստով աշխատանքի ոլորտում պետական կառավարման գործընթացները տարանջատված են: Քաղաքականությունը եւ ռազմավարությունը մշակում եւ իրականացնում է ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումը, իսկ աշխատանքային օրենսդրության պահանջների նկատմամբ պետական վերահսկողությունն իրականացնում է ՀՀ աշխատանքի պետական տեսչությունը՝ որպես նախարարության առանձնացված ստորաբաժանում: Մասնավորապես, «Աշխատանքի պետական տեսչության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է «Արդյունաբերության եւ առեւտրի մեջ աշխատանքի տեսչության մասին» ԱՄԿ թիվ 81 կոնվենցիայի պահանջներին համապատասխան: Համաձայն «Աշխատանքի պետական տեսչության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի՝ տեսչության լիազորություններից են՝

հսկողություն եւ վերահսկողություն է իրականացնում աշխատատեղում աշխատանքի անվտանգության եւ աշխատանքի պաշտպանության՝ օրենքով սահմանված պարտադիր պահանջների պահպանման նկատմամբ,

գործատուներից պահանջում է ձեռնարկել համապատասխան միջոցներ՝ վերացնելու ուսումնասիրության եւ (կամ) սուդումների ժամանակ աշխատանքի կազմակերպման ընթացքում հայտնաբերված այն խախտումները եւ թերությունները, որոնք կարող են վտանգ սպառնալ աշխատողի կյանքին կամ առողջությանը:

Օրենքի 11-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ աշխատանքի պետական տեսչությունը գործատուի աշխատատեղում սահմանված կարգով հաստատված աշխատանքի առողջ եւ անվտանգ պայմանների նորմատիվների կիրառման անհամապատասխանություն հայտնաբերելու դեպքում իր լիազորությունների սահմաններում միջնորդություն է ներկայացնում փորձաքննություն իրականացնելու իրավունք ունեցող համապատասխան մարմին՝ աշխատանքի առողջ եւ անվտանգ պայմանների վերաբերյալ փորձաքննություն իրականացնելու համար:

Մյուս կողմից, աշխատողների անվտանգության ապահովման եւ առողջության պահպանման բնագավառում իրականացվող բարեփոխումների տեսանկյունից էապես կարեւորվում է միջազգային փորձի համալիր դիտարկումը: Այս առումով, միջազգային փորձի մեր իրականացրած ընդհանրական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ աշխատողների անվտանգության ապահովման եւ առողջության պահպանման հարցերի կարգավորումը տարբեր երկրներում ունի հետեւյալ ամփոփ պատկերը.

երկրներ, որոնք պահպանել են խորհրդային ժամանակներում կիրառվող նորմերը եւ կանոնները (Ռուսաստան, Հայաստան, Տաջիկստան, Ղազախստան, Ուզբեկստան).

երկրներ, որոնք ընդունել են Եվրոմիության դիրեկտիվները որպես ստանդարտներ եւ կիրառում են դրանք (Լիտվա, Լատվիա).

երկրներ, որոնք եվրոպական դիրեկտիվների հիմքի վրա մշակել եւ կիրառում են առանձին մի շարք նորմատիվային փաստաթղթեր (Գերմանիա, Ֆրանսիա, Բուլգարիա եւ Եվրոմիության մի շարք այլ երկրներ).

երկրներ, որոնք եվրոպական դիրեկտիվների հիմքի վրա մշակել են ազգային օրենսդրությունը մեկ միասնական նորմատիվային փաստաթղթի տեսքով (Իռլանդիա):

Ընդհանուր առմամբ, մեր գնահատմամբ, աշխատանքի անվտանգության ապահովման եւ առողջության պահպանման ոլորտում հստակորեն ուշագրավ է ԱՄՆ-ի, Իռլանդիայի, Ֆինլանդիայի փորձը, քանի որ այդ երկրների արտադրանքը միջազգային շուկայում համարվում է ավելի մրցունակ, ապահովվում է աշխատանքի բարձր արտադրողականություն եւ տարեցտարի արձանագրվում է մասնագիտական հիվանդությունների եւ արտադրական

դժբախտ պատահարների նվազման միտում: Հիշարժան է նաեւ այն փաստը, որ աշխատանքի պաշտպանության խնդրի կարգավորման արդյունավետ լուծումը, ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, ապահովում է դժբախտ դեպքերի եւ մասնագիտական հիվանդությունների շուրջ 50 % նվազում:

Ելնելով վերը հիշատակված փաստերից, խնդիրներից եւ իրավիճակային դիտարկումներից՝ գտնում ենք, որ աշխատողների անվտանգության ապահովման եւ առողջության պահպանման հիմնական մեխանիզմների ներդրման նպատակը պետք է հանդիսանա ՀՀ աշխատանքային օրենսդրության ամբողջականացումը, որի արդյունքում ակնկալվում է արտադրությունում դժբախտ դեպքերի, հատկապես՝ մահվան ելքով, եւ մասնագիտական հիվանդությունների թվի հետեւողական կրճատում եւ կանխարգելում:

Հատկանշական է, որ՝ թեեւ նորմատիվների ներդրումը գործատուներից կպահանջի աշխատանքի կազմակերպման կարգապահության բարձրացում եւ որոշակի լրացուցիչ պարտավորություններ գործատուների եւ աշխատողների համար, այնուամենայնիվ, այն միաժամանակ կազմակերպություններում զգալիորեն կնվազեցնի արտադրական վնասվածքների եւ մասնագիտական հիվանդությունների թիվը, համապատասխան ռիսկերը (էկոլոգիական, աշխատանքի անվտանգ կազմակերպման, հոգեբանա-սոցիալական), եւ ի վերջո կնվազեն գործատուների կողմից վճարվող վնասի հատուցման գումարները:

Նորմերի ու կանոնների ընդունումը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում աշխատողների աշխատանքի անվտանգության եւ առողջության պահպանման կանոնակարգման ամբողջական դաշտի ձեւավորմանը, հնարավորություն կտա աշխատողների առողջության պահպանման եւ անվտանգության ապահովման վերաբերյալ հիմնական կանոնները միավորելու մեկ իրավական ակտում: Նորմերն ու կանոնները ուղեցույց կհանդիսանան բոլոր գործատուների եւ աշխատողների համար աշխատանքի անվտանգության եւ աշխատողների առողջության համար համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու եւ աշխատատեղերը կահավորելու հարցերում: Դրանք ենթակա կլինեն պարտադիր կիրառման բոլոր իրավաբանական եւ ֆիզիկական անձանց կողմից՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն:

Նորմերի ու կանոնների մշակման եւ ընդունման արդյունքում ակնկալվում է նաեւ ապահովել՝

1. ՀՀ սահմանադրության 32-րդ հոդվածի դրույթների պահանջը, այն է՝ յուրաքանչյուր աշխատող ունի անվտանգության ու հիգիենայի պահանջները բավարարող աշխատանքային պայմանների իրավունքը,

2. Վերանայված եվրոպական սոցիալական խարտիայի 2-րդ եւ 3-րդ հոդվածների պահանջների կատարումը,

3. ԱՄԿ «Արդյունաբերության եւ առեւտրի մեջ աշխատանքի տեսչության մասին» թիվ 81 կոնվենցիայի 3-րդ հոդվածի պահանջների կատարումը,

4. ՀՀ աշխատանքային օրենսգրքի 23-րդ գլխում սահմանված աշխատողների առողջության եւ անվտանգության վերաբերյալ պահանջների ամբողջական կիրառումը,

5. ՀՀ կառավարության 2008 թվականի հուլիսի 24-ի «ՀՀ կառավարության 2008-2012թթ. միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» թիվ 878 որոշման՝ 4.3 «Տնտեսական ոլորտ» բաժնի 4.3.1 «Տնտեսական զարգացման» ենթաբաժնի «Աշխատանքի առողջ եւ անվտանգ պայմանների ապահովում, սոցիալական գործընկերության զարգացում» 10.8 կետի կատարումը,

6. Եվրոպական հարեւանության քաղաքականության ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրի կատարումն ապահովող 2009-2011թթ. միջոցառումների ցանկով նախատեսված միջոցառումների 125-րդ կետի՝ «Բարեփոխումներ աշխատանքի առողջ եւ անվտանգ պայմանների ապահովման բնագավառում Եվրոպական միության նորմերին եւ կանոններին համապատասխան» իրականացումը:

Նորմերն ու կանոնները մշակելիս անհրաժեշտ է հիմք ընդունել Եվրոմիության կանոնակարգերը եւ հրահանգները (Եվրոմիության դիրեկտիվները)՝ ապահովելով ԵՄ օրենսդրության հետ ներդաշնակեցման համար անհրաժեշտ եւ Հայաստանի տնտեսության համար ընդունելի կարգավորման գործիքների կիրառումը:

Աշխատողների անվտանգության ապահովման եւ առողջության պահպանության մասին միասնական նորմերն ու կանոնները ՀՀ կառավարության կողմից հաստատվելուց հետո, անհրաժեշտ է նաեւ շահագրգիռ այլ նախարարությունների եւ գերատեսչությունների կողմից ընդունված գերատեսչական համապատասխան նորմատիվ ակտերը համապատասխանեցնել ՀՀ աշխատանքային օրենսդրության պահանջներին:

Աշխատանքի պաշտպանության ոլորտի ամբողջական կանոնակարգման նպատակով իրականացվող բարեփոխումների շրջանակներում ենթադրվում է նաեւ՝

աշխատանքի ոլորտի զարգացման ռազմավարության մշակում.

աշխատողների աշխատանքի անվտանգության եւ առողջության պահպանման նորմերի եւ կանոնների հետեւողական ներդրման ապահովում.

կազմակերպություններում աշխատանքի անվտանգության ապահովման եւ առողջության պահպանման ծառայությունների ստեղծման աշխատանքներին աջակցության ցուցաբերում, այդ թվում այդ ծառայությունների աշխատողների համար մասնագիտական ուսուցման եւ խորհրդատվությունների պարբերաբար կազմակերպում.

աշխատանքի անվտանգության ապահովման եւ առողջության պահպանման նկատմամբ վերահսկողության ապահովման համալիր մեխանիզմների մշակում եւ ներդրում.

կազմակերպություններում աշխատանքի անվտանգության ապահովման կառավարման համակարգերի ներդրման աշխատանքների կազմակերպման աջակցում.

աշխատավայրում դժբախտ դեպքերից եւ մասնագիտական հիվանդություններից ապահովագրության հայեցակարգի ընդունում եւ դրա հիման վրա անհրաժեշտ օրենսդրական դաշտի ապահովում:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

Միջազգային

Լուկաշենկոն հավանություն տվեց Եվրասիական միության գաղափարին

Բելառուսի նախագահ **Ալեքսանդր Լուկաշենկոն** երեկ հոդված է հրապարակել «Իզվեստիա» թերթում, որտեղ ՌԴ վարչապետ Վլադիմիր Պուտինը օրերս հանդես էր եկել Եվրասիական միություն ստեղծելու առաջարկությամբ (**«Ազգը»** գրել է այդ մասին):

Լուկաշենկոն գրում է, որ Եվրասիական միության ստեղծման անհրաժեշտությանը վերաբերող Պուտինի խոսքերը ոչ թե իրավիճակային են, այլ վկայում են «ճիշտ ռազմավարության» մասին:

«Շատ տարիների ընթացքում առաջին անգամ Ռուսաստանը հստակորեն եւ աներկմտորեն հռչակեց ընդհանուր խորհրդային անցյալ ունեցող պետությունների հետ հարաբերությունների գերակայությունը», նշում է Բելառուսի նախագահը»:

«Ռուսաստանի նորագույն պատմության մեջ առաջին անգամ այդ մասին խոսում է նախագահության թեկնածուն, ըստ որում, ինչպես ես եմ հասկանում, իր նախընտրական արտահայտությունը կգիտակցեն, եթե զգան հետեւում ռազմավարություն է, ճիշտ ռազմավարություն», ընդգծում է Լուկաշենկոն:

Նրա կարծիքով, բնավ զարմանալի չէ «արտաքին» կենտրոնների մի մասի» սառն արձագանքը Պուտինի նախաձեռնության նկատմամբ: «Միջազգային ո՞ր խաղացողին կուրախացնի նոր, հզոր, միասնական շուկայի ձեւավորումը, որը կունենա անչափ լուրջ արտադրական ռեսուրսներ, մտավոր ներուժ եւ կլինի ագրեսիվ մրցակից», շարունակում է նախագահը:

Բելառուսում եւս արձագանքը միանշանակ չէ: Մարդիկ Եվրասիական միության անհրաժեշտությունը կգիտակցեն, եթե զգան դրանից ակնկալվող օգուտները իրենց բարեկեցության բարձրացման համար:

Լուկաշենկոն կարծում է, որ Ռուսաստանը, Բելառուսը եւ Ղազախստանը սկսում են կենսագործել «բախտորոշ» վճիռներ: «Խորացված ինտեգրման կառույցը պետք է ամուր լինի, այլապես անիմաստ է այդման ջանքերի գործադրումը», գրում է նա:

«Նոր մեխանիզմի հուսալիությունն ու հարատեւությունը վերջին հաշվով որոշվում են նրանով, թե ապահովո՞ւմ է արդյոք իր մասնակիցների շահերի լիարժեք պաշտպանություն: Անհրաժեշտ է պարզ գիտակցել. նրանց շահերի ամեն մի ոտնահարում վաղը կառաջացնի ճեղքեր, որոնք կփլուզեն նախ վստահությունը, ապա նաեւ անհերեւակայելի համատեղ ջանքերով ստեղծված նոր կառույցը: Սա՛ է գլխավորը: Անչափ բարդ իրավաբանական, մտքային, ֆինանսական եւ մյուս հարցերը կարելի է լուծել: Եվ մենք կարճ ժամանակում համատեղ ջանքերով կլուծենք ամեն ինչ», եզրակացնում է Բելառուսի նախագահը:

Յանուկովիչի այցը հետաձգեցին, բայց...

Եվրոմիության խորհուրդը Ուկրաինային ծանուցել է, որ հոկտեմբերի 20-ին նախագահ Վիկտոր Յանուկովիչի Բրյուսել կատարելիք այցը հետաձգվում է: Այդ մասին հայտարարել է ԵՄ բարձրաստիճան դիվանագետներից մեկը: Նա Կիեւին առաջարկել է «հետաձգել այցը, մինչեւ որ առավել նպաստավոր պայմաններ ստեղծվեն երկկողմ հարաբերությունների զարգացման համար»:

Բրյուսելում Յանուկովիչը պետք է հանդիպումներ ունենար Եվրահանձնաժողովի եւ Եվրոմիության ղեկավարներ Ժոզե Մանուել Բառոզուի եւ Հերման Վան Ռոմպեյի հետ: Պետք է քննարկվեին տարեվերջին կայանալիք ԵՄ-Ուկրաինա գագաթաժողովի վերջին նախապատրաստությունները, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը:

Հիշյալ դիվանագետը հաստատել է, որ գագաթաժողովը տեղի կունենա դեկտեմբերին: Սպասվում է, որ այնտեղ կստորագրվի համաձայնագիր ազատ անդամակցության եւ ազատ առեւտրի գոտու վերաբերյալ:

Չնայած ԵՄ-ը դատապարտեց նախկին վարչապետ Յուլիա Տիմոշենկոյի նկատմամբ Կիեւում կայացված դատավճիռը եւ հետաձգեց Յանուկովիչի այցը, այնուամենայնիվ այդ համաձայնագրի ստորագրումը կարեւոր է համարում «Կիեւի եվրոպական կողմնորոշումը խթանելու» տեսակետից: Հակառակ դեպքում Ուկրաինան կարող է շրջվել դեպի արեւելք եւ միանալ Ռուսաստան-Բելառուս-Ղազախստան մաքսային միությանը:

Մյուս կողմից, եվրոպական երկրների խորհրդարաններում եւ Եվրոխորհրդարանում համաձայնագրի վավերացումը կարող է ձգձգվել, քանի չի վերացել «ԵՄ մտահոգությունը», մասնավորապես Տիմոշենկոյի գործի առնչությամբ:

Գիլադ Շալիտը վերադարձավ Իսրայել, իսկ պաղեստինցիներից 259՝ Գազա

«Համաս» պաղեստինյան զինված խմբավորումը երեկ գերությունից ազատ է արձակել իսրայելցի զինծառայող Գիլադ Շալիտին, որը կփոխանակվի Իսրայելում պահվող 1027 պաղեստինցի կալանավորների հետ: Շալիտին արդեն հանձնել են Իսրայելի ներկայացուցիչներին: Նախնական բուժզննությունից հետո կապրալ Շալիտին տեղափոխել են Կերեմ-Շալոմ ռազմական, ապա օդուժի Թել-Նոֆ ռազմական: Այնտեղ նրան դիմավորել են Իսրայելի վարչապետ Բենիամին Նաթանյահուն, պաշտպանության նախարար Էհուդ Բարաքը, բանակի ղեկավարությունը եւ Շալիտի ընտանիքի անդամները:

Հարազատների եւ բանակի ու պետության ղեկավարների հետ կայացած հանդիպումից, ինչպես նաեւ առավել մանրակրկիտ բուժզննությունից հետո Շալիտը ընտանյոք ուղղաթիռով տեղափոխվել է հարազատ ավան, որը գտնվում է երկրի հյուսիսում: Այդ մասին հաղորդում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:

«Համաս»-ի գրոհայինները Շալիտին գերի էին վերցրել 2006-ի հունիսի 25-ին Գազայի Կերեմ-Շալոմ սահմանային պահակակետի վրա կատարած հարձակման ժամանակ: Իսլամիստները Շալիտի արձակման դիմաց պահանջում էին իսրայելական բանտերից ազատ արձակել պաղեստինցի կալանավորներին: Իսրայելը այն ժամանակ հրաժարվեց կատարել «Համաս»-ի պահանջները եւ ռազմական գործողություն սկսեց Գազայի հատվածում, սակայն չկարողացավ ազատագրել Շալիտին: 2009-ին պաղեստինցի 20 կին կալանավորների արձակման դիմաց Իսրայելի իշխանությունները ստացան Շալիտի տեսագրված ուղերձը, որը ցույց էր տալիս նրա ողջ լինելը: Եգիպտոսի միջնորդությամբ մոտ 5 տարի վարված պաղեստինա-իսրայելական բանակցություններից հետո որոշվեց Շալիտին փոխանակել պաղեստինցի 1027 կալանավորների հետ, որոնցից 27-ը կանայք են: Սկզբում ազատ կարձակվի 477 կալանավոր, իսկ ավելի ուշ՝ եւս 550: Երեկ ազատ արձակվեց նրանցից 259, դիմավորվելով մեծագույն խանդավառությամբ:

ԵՐԵՎԱՆ

«Գրական տաղան. տասը տարի անց»

2011 թվականի հոկտեմբերի 19-ին, ժամը 13:00-ին, Ազգային պատկերասրահի 3-րդ հարկում, Որմնանկարների դահլիճում տեղի կունենա «Գրական տաղան. տասը տարի անց» մշակութային նախագծի մեկնարկը:

Արտասահմանյան երկրների հետ մշակութային համագործակցության հայկական ընկերության եւ ՀՀ մշակույթի նախարարության նախաձեռնությամբ՝ սույն թվականի հոկտեմբերի 19 - 28-ին իրականացվող «Գրական տաղան 2011. տասը տարի անց» ծրագրին մասնակցելու համար Հայաստան կժամանեն եվրոպացի 15 գրողներ: Նախագծի շրջանակներում նրանք հնարավորություն կունենան տեսնելու Հայաստանը, ճանաչելու հայ մարդուն՝ նրա ավանդույթներն ու մշակույթը, ինչպես նաեւ կքննարկվեն ժամանակակից գրականության ու մշակույթի խնդիրները:

Այս նախագիծը 10 տարի առաջ կայացած «Գրական տաղանի» շարունակողն է: «Գրական տաղան-2001»-ը նույնպես ուղղված էր գրականությունների ու գրականություն ստեղծողների մերձեցմանը, որի արդյունքը միանգամայն շոշափելի էր: Տպագրվեց այդ ծրագրին մասնակցած եվրոպացի գրողների՝ Հայաստանին նվիրված ստեղծագործություններից կազմված «Գրական տաղան» ժողովածուն:

Գրականությանն ու գրքին նվիրված այս նախագիծը լավ առիթ է եվրոպացի գրողներին ներկայացնելու 2012 թվականին մեզ սպասվող գրական իրադարձությունները՝ Հայ գրատպության 500-ամյակը եւ ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից Երեւանը գրքի համաշխարհային մայրաքաղաք հռչակումը:

Ծրագրի հյուրերն են՝

Հերբերտ Մաուրեր (Ավստրիա), Գերտ վան Իստենդել եւ Ֆիլիպ վան Զանդայկ (Բելգիա), Քրիստիան Լանգե եւ Սվանտիե Լիխտենշտեյն (Գերմանիա), Պետեր Սաուտեր եւ Վահուր Աֆանասեւ (Էստոնիա), Բեջան Մատուր (Թուրքիա), Կլաուդիո Պոցցանի (Իտալիա), Յացեկ Պագոխա (Լեհաստան), Արլետ վան Լաար եւ Սերժ վան Դայնհովեն (Հոլանդիա), Լեո Բուտնարու (Մոլդովա), Դավիդ Մագրաձե (Վրաստան), Սերժ Վենտուրինի (Ֆրանսիա):

Ինչպես տասը տարի անց, այս անգամ էլ նախագծի արդյունքում կստեղծվի գրական մի ժողովածու, որտեղ ծրագրի մասնակիցներն իրենց նախընտրած ժանրով կներկայացնեն իրենց խոհերն ու տպավորությունները Հայաստանի, հայ ժողովրդի ու հայկական մշակույթի մասին: Նախատեսվում է նաեւ բացել «Գրական տաղան» նախագծի կայքը:

Էլ-փոստ՝ literary.ark@gmail.com

Ջեյմս Ռասելը բացահայտում է հայ-եբրայական մի առեղծված

Նոյեմբերի 3-ին Բելմոնտի (Մասաչուսեթս) հայկական ուսումնասիրությունների եւ հետազոտությունների ազգային ասոցիացիայի կենտրոնում Հարվարդ համալսարանի դասախոս, Մաշտոցի անվան մրցանակի արժանացած պրոֆեսոր Ջեյմս Ռասելը դասախոսություն է կարդալու «Հայ-եբրայական մի առեղծվածի կամ 1000 տարվա հնություն ունեցող մի հայկական տեքստի մասին», որը գտնվել է Կահիրեի հրեական սինագոգներից մեկում: 19-րդ դարի վերջերին ճանաչարհորդ մի գիտաշխատող Կահիրեի հրեական սինագոգներից մեկի պահեստարանում պատահականորեն հայտնաբերում է բազմաթիվ միջնադարյան ձեռագրեր, նամակներ, գրքեր եւ փաստաթղթեր՝ գրված եբրայերեն լեզվով, որոնց մեջ եղել է նաեւ հայկական մի բառացանկ իր եբրայերեն-արաբերեն թարգմանությամբ: Հարգարժան պրոֆեսորը բացահայտելու է, թե ինչ առիթով է գրված այդ բառացանկը, լույս սփռելով Մերձավոր Արեւելքի մինչ այժմ անհայտ մի ժամանակաշրջանի վրա:

Պրոֆ. Ռասելը հեղինակ է մի շարք գրքերի, որոնց թվում են «Բոսֆորյան գիշերներ: Պետրոս Դուրյանի ամբողջական լիրիկական պոեմները» եւ «Հովհաննես Թլկուրանցին եւ միջնադարյան հայկական լիրիկական ավանդությունը» հատորները:

Դասախոսության մասին առավել մանրամասնություններ համար այցելել hq@naasr.org կայքը:

Հ. Ծ.

«Աշխա՞րհն է տարօրինակ, թե՞ ես»

Այսպես է վերնագրել իր նոր ալբոմը վերջերս իր 22 տարին նոր բոլորած Կոսմո Ջարվիսը, որ սեպտեմբերի վերջերին Բիրմինգհեմում կազմակերպել է ալբոմի շնորհանդեսը:

Կոսմոն, որն ըստ «Բիրմինգհեմ իվնինգ մեյլ» թերթի թղթակից Էնդի Կոուլմենի, որդին է ամերիկահայ մոր եւ բրիտանացի հոր, արդեն 300 երգերի եւ 65 կարճամետրաժ ֆիլմերի հեղինակ է: Ծնվել է Ռիջվուդում (Նյու Ջերսի), բայց հետո տեղափոխվել է Դեվոն (Անգլիա) եւ կրթությամբ նվիրվել երաժշտությանն ու կինոարվեստին: Սկսել է երգեր գրել 12 տարեկանից, կինո նկարահանել մի փոքր ավելի ուշ:

«Սիրում եմ ամեն ինչ ինքնուրույն սովորել: Այդ պատճառով էլ 16 տարեկանից դուրս եկա դպրոցից: Ես «խենթ» եմ, ամեն ինչ կանեմ ծիծաղելի իրավիճակ ստեղծելու համար», խոստովանում է Կոսմոն, որ նոր ալբոմի թողարկմանը զուգահեռ նաեւ նկարահանել է իր առաջին լիամետրաժ գեղարվեստական ֆիլմը, որին տվել է «Անպատշաճ սենյակը» վերնագիրը: «Դա հիմնականում ծնող դառնալու եւ պատասխանատվություն ստանձնելու մասին է», բացատրում է նա: Տեղեկությունը «Արմինյն միրոր սփեքթեյթրից», որն արտատպել էր հոդվածը:

Հ. Ծ.

Հոբելյան

Հոկտեմբերի 20-ին, ժամը 15-ին Ավ. Իսահակյանի անվան քաղաքային գրադարանում կկայանա գրող, մշակույթի վաստակավոր գործիչ արձակագիր, թատերագիր, հրապարակագիր **Նորայր Ադալյանի** 75-ամյակի հոբելյանական ցերեկույթը՝ կազմակերպությամբ Հայաստանի գրողների միության, Թատերական գործիչների միության եւ Ավ. Իսահակյանի անվ. գրադարանի:



Սյունաց աշխարհի հինավուրց Տոլորս գյուղի պատմությունը

Վերջերս պատահաբար ձեռքս անցավ մի գիրք՝ «Տոլորս» վերնագրով: Հեղինակն է **Ալեքսանդր Սուքիասյանը**: Լինելով վաստակաշատ շինարար՝ նա իր տասնամյակների աշխատանքային գործունեությանը զուգընթաց հրատարակել է մի շարք հետաքրքիր գեղարվեստական գրքեր, որոնք նվիրված են հայրենի բնաշխարհին, նրա ժողովրդի կենցաղին ու սովորույթներին: Ա. Սուքիասյանի «Տոլորս» խորագրով հայրենապատումը ընթերցվում է մեկ շունչով:

Հայաստանի՝ անկախություն ձեռք բերելուց հետո մեր ժողովրդի մեջ կարծես նոր թափ առավ հետաքրքրություն սեփական արմատների՝ ծննդավայրերի նկատմամբ: Ստեղծվեցին հայրենակցական միություններ, սկսեցին լույս տեսնել զանազան բնակավայրերին, կենցաղին վերաբերող գրքեր: Այս առումով հետաքրքրական եւ արժեքավոր գործ է հիշյալ աշխատանքը: Թե պատմական եւ թե ճոխ լեզվական առումով գիրքը գրված է մեծ պաթոսով: Հեղինակը, Տոլորս գյուղի պատմությունը կապելով հայ ժողովրդի անցած դառն ու դաժան ճակատագրին, նախաբանում գրում է. «Թերթում եմ հազարամյակների ճանապարհ անցած մեր ժողովրդի պատմության էջերը: Հայկական լեռնաշխարհ ու հայոց բնօրրան՝ իր ավելի քան 300 հազար քառակուսի կմ տարածությամբ... Թշնամական գիշատիչ հարեւաններ... Անընդմեջ պատերազմներ Արեւմուտքի ու Արեւելքի միջեւ Հայաստանի հողի վրա՝ Հայաստանին տիրելու համար, երկրի բաժանում Արեւմտյանի ու Արեւելյանի, անհավասար դարավոր պայքար պետականության վերականգնման համար... Մեծ եղեռն ու Արեւմտյան Հայաստանի կորուստ... Եվ մեր ժողովրդի վերածնունդ օրրան դարձած Արեւելյան Հայաստան՝ իմ փոքր հայրենիք Սյունիքով եւ նրա մի անկյունում ծվարած իմ հայրենի գյուղ Տոլորսով...»:

Ուսումնասիրելով Տոլորսի շրջակայքում 1952-ին հայտնաբերված բրոնզեդարյան շրջանի դամբարանաբլրի փրկված նյութերը՝ «Գյուղի նախապատմություններից» գլխում հեղինակն իր ափսոսանքն է հայտնում, որ ժամանակին հնարավոր չի եղել փրկել դամբարանաբլրի բոլոր նմուշները մեր իսկ թալանչիների ձեռքից, ու դեռեւս հույս է փայփայում. «Գուցե ինչ-որ հրաշքով, ինչ-որ մեկի մոտ պահպանված լինեն Տոլորսի հիշարժան դամբարանաբլրի մասունքներից... Եվ այդ «ինչ-որ մեկը» հիշի պատմության թանգարանի տեղը»: Անկեղծորեն այդ անհուսալի «հույսը» ես էլ եմ փայփայում...

Աշխատանքը համեմված է արխիվներից, տարբեր ուսումնասիրողների աշխատություններից քաղված նյութերով, նաեւ կենդանի մարդկանց վկայություններով, կենցաղին, գյուղի պատմությանը, տեղանքներին վերաբերող նկարներով: Օգտվելով գյուղի պատմության ուսումնասիրություններից՝ լեզվաբանների աջակցությամբ հեղինակը ստուգաբանում է գյուղի անունը որպես «Մեծ ոլորաններ»: Այն համընկնում է գյուղի թե սկզբնական կնքանվան (Տոլորք) եւ թե այժմյան անվանը (Տոլորս), ինչպես նաեւ գյուղի տեղանքին:

Ա. Սուքիասյանը ցավով է խոսում ջրի տակ մնացած հին գյուղի եւ հատկապես Ս. Հռիփսիմե եկեղեցու ճակատագրի մասին եւ նշում, որ եկեղեցու պատերի կրաշաղախն այնքան բարձր մեխանիկական ու կապակցող հատկություն ունի, որ շուրջ 40 տարի ջրի տակ մնալով նրա պատերի խամքարաբետոնե միջուկի մեծ մասը դեռ կանգուն է մնացել: Նա խորհում է՝ արդյոք հնարավոր չէ՞ր տեղափոխել արբատեղին, եւ իր հոգու կանչն արտահայտում է բանաստեղծորեն.

Ախ իմ լիճ կապուտակ,
Ինչո՞ւ առար ջրիդ տակ
Մեր ծաղկաշատ գյուղը հին,
Վեհաշուք եկեղեցին:

Հեղինակը որոշ բացահայտումներ է կատարել գյուղի բնակչության կազմի, եկեղեցու եւ դպրոցի տարիքի վերաբերյալ: Եթե մինչ այդ եղած աղբյուրներում նշվում էր, որ 1831-ին գյուղում ապրել է 88 հայ բնակիչ, ապա, ըստ Հայաստանի ազգային արխիվի



(ՀԱԱ) տվյալների, նրանցից 24-ը եղել է ազգությամբ թաթար: Ըստ Ղ. Ալիշանի՝ 1886 թ.-ին գյուղում ապրում էր 563 հոգի (ոգիք) հայ եւ 176 օտար (օտարք): Նա չի մանրամասնում այդ օտարների ազգային պատկանելիությունը: Ե. Լալայանն օտարներին համարում է շիա-պարսիկներ: Իսկ թե ինչպես են նրանք հայտնվել Տոլորսում, Ա. Սուքիասյանն այն տրամաբանորեն կապում է պարսիկների՝ Սիսիանում հայտնվելու տվյալների հետ: Ընթերցողին չձանձրացնելու նպատակով գյուղի բնակչության կազմի տվյալները գրքում ներկայացվում են աղյուսակով: Եկեղեցու բարավորին (եկեղեցու մուտքի կամարաձեւ քարը) եւ այլ աղբյուրներում նշվում է, որ այն կառուցվել է 1861 թ.: Մինչդեռ ՀԱԱ-ում եղած համոզիչ տվյալների վերլուծությամբ ու պարզ տրամաբանությամբ հեղինակը գտնում է, որ եկեղեցու տարիքն ավելի հին է՝ առնվազն մինչեւ 1800 թվականը: «Դպրոցը» գլխում Ա. Սուքիասյանը գտնում է, որ գյուղի դպրոցն իր կենսագրությունը սկսում է ոչ թե 1906-ից, երբ կառուցվեց նրա առաջին կանոնավոր շենքը, այլ առնվազն 1870-ականներից:

«Գրքի կենցաղն ու սովորույթները» բաժնում հաճույքով են ընթերցվում Տոլորս գյուղի օրհնանքները, անեծքները, ժողովրդական առած-ասույթները, խաղերն ու զվարճալի զույցները:

Ա. Սուքիասյանը ծավալուն աշխատանք է կատարել՝ հավաքելով գյուղի խոսվածքից շուրջ 1800 բառ: Այն համեմատելով Սիսիանի շրջանի Ե. Լալայանի մագյուղացիներից (այդ թվում՝ Տոլորսի ութ դուստր) 101-ը մնաց մարտի դաշտում: Տոլորսը տվել է մեկ գեներալ, ռազմաօդային ուժերի երկու օդաչու եւ տարբեր կոչումներով տասնյակ զինվորական սպաներ:

Այդ փոքրիկ գյուղի անվանի մարդկանց ցուցակում կան դոկտոր-պրոֆեսորներ, տասնյակ գիտության թեկնածուներ, ԽՍՀՄ սպորտի վարպետներ, ՀԽՍՀ եւ Ռուսաստանի Դաշնության վաստակավոր մեկ մարզիչ, սամբոյի գծով աշխարհի չեմպիոն (1981 թ.) եւ այլն: Տոլորս գյուղից է սերվում «Հանրապետական» կուսակցության հիմնադիր, անկախության մեծ ջատագով Աշոտ Նավասարդյանը:

«Գյուղի տեղանունները» բաժնում հեղինակը նշում է գյուղերի անուններ, որոնց տարածքը, ինչպես ինքն է ասում, այլեւս գյուղատեղիի չի նմանվում: Եվ միայն սերնդից սերունդ բերնեբերան փոխանցված է, որ այսինչ տեղում է եղել այսինչ գյուղը կամ այնինչ տարածքը: Որոշ տեղանուններ հիշատակելիս (Ճգնավոր, Մալիքմանց ճաղաց) մեջբերվում են հաճելի ժպիտներ գյուղական զրույցներից:

Գրքի վերջաբանում Ա. Սուքիասյանն իրավացիորեն նշում է, որ մեր ժողովրդի կորուստների ցավն ամեն մի հայ մշտապես կրում է իր կրծքի տակ: Նա իր համոզմունքն է հայտնում, որ կգա ժամանակ, երբ հնարավոր կդառնա լուծելու Հայ դատի մյուս հրամայականները եւ իր հոգու իղձն արտահայտում է բանաստեղծորեն:

Այսօր, այնուհետեւ լավատեսորեն հուսադրում է հեղինակը, մեխանիզմներն ու կապը նախկինի համեմատ զգալի են: Ջրամբարի երախից փրկված Տոլորս գյուղի հողատարածքները, բարեբախտաբար, հիմնականում բերրի են, եւ թեպետ դժվարությամբ, այնուամենայնիվ, հնարավոր է հասնել գոնե հին գյուղի գյուղատնտեսական նախկին նվաճումներին:

Շնորհավորում եմ շինարար հեղինակին այս հիասքանչ գրքի հրատարակման առթիվ եւ ցանկանում նրան հաջողություններ: Նոր ակնկալիքներով եմ սպասում «Տոլորս»-ի 2-րդ գրքի հրապարակ գալը:

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ
ԳԱԱ ակադեմիկոս

Վարդան Մինասյան. «Լավ արդյունքը լավ խաղի հետեւանք էր»

Ֆուտբոլի 2012-ի Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում Հայաստանի հավաքականի ելույթների ամփոփմանն ու առաջիկա ծրագրերին էր նվիրված երեկ ՀՖՖ նստավայրում հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանի մամուլի ասուլիսը:

«Եթե հիշում եք, ասել էի, որ լավ արդյունքի հասնելու համար մեծ ծավալի աշխատանք պետք է կատարվի: Բելառուսի հավաքականի հետ խաղից սկսած, սերնդափոխություն իրականացրինք: Մեզ համար կարեւորը հավաքականի կորիզը ձեւավորելն էր, մարտունակ կոլեկտիվ կազմավորելը, որն ունենար իր խաղային ձեռագիրը: Կարծում եմ, որ այս առումով հավաքականը կայացել է, ունի իր ուրույն ոճը: Հավաքականի կորիզը հիմնականում երիտասարդ ֆուտբոլիստներն են՝ գումարած փորձառու Սարգիս Հովսեփյանն ու Ռոման Բերեզովսկին: Եթե ընտրական մրցաշարի սկզբում մեզ փորձը չէր բավականացնում, ապա ընթացքում ֆուտբոլիստները դա էլ ձեռք բերեցին: Եթե հաշվի առնենք, թե ինչ էինք նախատեսել ընտրական այս մրցափուլում, ապա արդյունքից պետք է գոհ լինենք: Սակայն եկավ մի պահ, որ կարող էինք եզրափակիչի ուղեգրին հավակնել, բայց չստացվեց: Այս տեսանկյունից եթե գնահատենք, իհարկե, անբավարարվածության զգացում ունենք: Բայց ընդհանուր առմամբ գոհ եմ արդյունքից, տղաների ցուցադրած խաղի որակից, նրանց վերաբերմունքից: Միանշանակ կարելի է փաստել, որ լավ արդյունքը լավ խաղի հետեւանք էր», ամփոփելով արդյունքները, նշեց **Վարդան Մինասյանը**:

Անդրադառնալով Իռլանդիայի հավաքականի հետ խաղում ընտրած կազմին, Մինասյանը նշեց, որ ինքն այն մարզիչներից չէ, որոնք չեն փոփոխում հաղթած կազմը: Յուրաքանչյուր խաղում ելնելով մրցակցից ու նախատեսված մարտավարությունից, ինքն ընտրում է 11 ֆուտբոլիստներին մեկնարկային կազմում ընդգրկելու համար: Ըստ գլխավոր մարզչի, իռլանդացիների հետ կարիք չկար երկու հենակետային կիսապաշտպաններով խաղալ, ուստի Արթուր Եդիգարյանի փոխարեն մեկնարկային կազմում ընդգրկել էր Էդգար Մալաֆյանին: Ամեն ինչ նորմալ էր ընթանում մինչեւ Բերեզովսկուն դաշտից հեռացնելը: Իսկ խաղից հետո Վարդան Մինասյանը շնորհակալություն է հայտնել տղաներին կատարած աշխատանքների համար եւ նշել, որ կարող են գլուխները բարձր պահած շարունակել ելույթները:

Գլխավոր մարզիչը գտնում է, որ կգա այն ժամանակը, երբ ֆուտբոլում վիճելի դրվագների պարզաբանման համար կդիմեն կրկնապատկերների օգնությանը:

Անդրադառնալով 2-րդ խմբի հավաքականներին, Մինասյանը նշեց, որ շատ ուժեղ մրցակիցներ էին բաժին ընկել: Խաղի որակով եւ փորձով թերեւս ռուսները գերազանցեցին մյուսներին: Նա համոզված է, որ իռլանդացիների հետ առաջին խաղում մեր ֆուտբոլիստները պարտվեցին փորձի պակասի պատճառով: Իսկ հավաքականի համար բեկումնային համարեց սլովակների հետ երեւանյան հանդիպումը: Իսկ ահա ռուսների հետ երեւանյան հանդիպումը չստացվեց, քանի որ մեր ֆուտբոլիստները լավ մարզավիճակում չէին:

Խոսելով 2014-ի աշխարհի առաջնության ընտրական փուլի վիճակահանության մասին, Վարդան Մինասյանը հետեւյալը նշեց. «Կրկին ուժեղ խմբում ենք հայտնվել: Գիտեմ, որ Իտալիան եւ Դանիան Եվրո-2012-ի եզրափակիչի ուղեգիր են նվաճել, չեխերն էլ հնարավորություն ունեն հանդես գալու եզրափակիչ փուլում: Դժվար է ասել, թե այդ հավաքականները Եվրո-2012-ից հետո հոգեբանական եւ ֆիզիկական ինչ-որ ինչ վիճակում կլինեն: Բուլղարիային եւ Մալթային էլ չպետք է թերագնահատել: Սակայն մյուս կողմից մեր հավաքականն արդեն զգալի փորձ ունի, լավ արդյունքների է հասել, ուստի մրցակիցներն էլ զգուշանում են մեզանից:

Շուտով կկազմվի 2014-ի աշխարհի առաջնության խաղացանկը: Ես 2 տարբերակ եմ ներկայացրել ֆուտբոլի ֆեդերացիա: Նախընտրում եմ ընտրական մրցաշարը սկսել Չեխիայի կամ Բուլղարիայի հետ երեւանյան հանդիպումով, դանիացիների հետ խաղալ մարտին: Չնայած կարծում եմ, որ այնքան էլ էական չէ, թե ում հետ կխաղանք սկզբում»:

Ընտրական մրցաշարի նախապատրաստական փուլում հավաքականը ծրագրել է ընկերական 4 հանդիպում անցկացնել: Դրանցից մեկը նախատեսված է փետրվարին, երկուսը՝ մայիսին, մեկն՝ օգոստոսին: Վարդան Մինասյանը տեղեկացրեց, որ արդեն նոր պայմանագիր է ստորագրել ֆեդերացիայի հետ եւ ուրախ է շարունակելու աշխատանքը հավաքականում: Նա գտնում է, որ հավաքականը դեռեւս կես ճանապարհին է ու առջեւում մեծ ծավալի աշխատանք կա կատարելու կազմն ավելի ուժեղացնելու նպատակով: Երիտասարդական հավաքականում կան մի քանի ֆուտբոլիստներ, որոնք կարող են մոտ ապագայում համալրել ազգայինի կազմը: Գլխավոր մարզիչը շարունակելու է հետեւել նաեւ արտերկրում հանդես եկող հայազգի ֆուտբոլիստների ելույթներին ու լավագույններին հրավիրել հավաքական: Մասնավորապես նա ցանկանում է դիտել «Կռիլյա Սովետովում» հանդես եկող Ռոման Գրիգորյանի խաղը:

Որպես լուրջ հիմնահարց Մինասյանը նշեց դարպասապահի խնդիրը: Նա համաձայնվեց մեր այն առաջարկին, որ Իրանի օրինակով գուցե հարկավոր է մի քանի տարով արգելել բարձրագույն խմբի թիմերում լեգեոնական դարպասապահների ընդգրկումը, որպեսզի տեղացի կադրերը խաղան ու աճեն: Իսկ ինչ վերաբերում է աշխարհի առաջնության ընտրական մրցաշարում հավաքականի առջեւ դրվելիք խնդրին, ապա, ըստ Մինասյանի, դա ֆեդերացիայի նախագահը պետք է անի: Ամեն դեպքում Մինասյանը համաձայնեց, որ կարելի է այս հավաքականով պայքարել եզրափակիչի ուղեգրի համար:

Անդրադառնալով Հայաստանի առաջնությանը, «Փյունիկի» ներկա իրավիճակին, Մինասյանը նշեց, որ թիմի միջին տարիքը 18-19 է, այս տարի խնդիր է դրվել նոր կոլեկտիվ ձեւավորել: Նա ընդհանուր առմամբ գոհ է երիտասարդ ֆուտբոլիստների գործողություններից: Մինասյանի համոզմամբ, «Ուլիսն» իր խաղացողների կազմով արժանի է չեմպիոնի տիտղոսին, «Գանձասարն» էլ առաջընթաց է ապրել, իսկ ահա «Միկան» ու «Բանանցն» իրենց հնարավորությունները լիովին չեն բացահայտում: Նա համաձայնվեց ցավալի այն փաստին, որ Հայաստանում ակումբային ֆուտբոլը թույլ է, մրցունակ չէ միջազգային ասպարեզում: Դրա հիմնական պատճառը Մինասյանը համարեց ոչ մեծ ներդրումները: Նա նաեւ նշեց, որ «Փյունիկի» խաղականությունը մի փոքր այլ է. ակումբի գերխնդիրը հավաքականների համար ֆուտբոլիստներ պատրաստելն է, որի նպատակով էլ ձգտում են լավագույններին տեղափոխել արտերկիր:

Ասուլիսի վերջում Վարդան Մինասյանն անդրադարձավ հավաքականի մարզչական կազմին ու ֆուտբոլիստներին. «Շատ հետաքրքիր էր աշխատել մարզչական շտաբում ընդգրկված Ռաֆայել Նազարյանի, Արթուր Մկրտչյանի, Արթուր Ավագյանի եւ ֆիզպատրաստության մարզիչ, արգենտինացի Դանիի հետ: Երբեմն մեր կարծիքները չէին համընկնում, ինչը եւս շատ դրական եմ համարում: Ցանկանում եմ ընդգծել նաեւ ֆուտբոլիստների գործոնը: Նրանք շատ լավ ֆուտբոլիստներ են, մեծ ցանկությամբ են գալիս հավաքական ու խաղում, օժտված են մարդկային բարձր որակներով: Հենց դա էլ հաջողության գլխավոր երաշխիքներից մեկն էր: Կրկին ցանկանում եմ շնորհակալություն հայտնել ֆուտբոլիստներին, նրանք իսկական պրոֆեսիոնալներ են: Վստահ եմ, որ հավաքականը մեծ ներուժ ունի եւ առաջադիմելու հնարավորություն կա»:

ՖՈՒՏԲՈԼ

Հաղթական մեկնարկ

Ֆուտբոլի Հայաստանի մինչեւ 17 տարեկանների պատանեկան հավաքականը հաղթանակով մեկնարկեց Սերբիայում ընթացող Եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարում: Մեր պատանիները 3-2 հաշվով կամային հաղթանակ տոնեցին Ուելսի հավաքականի նկատմամբ: Հանդիպումը շատ անհաջող սկսվեց մեր հավաքականի համար: 11-րդ եւ 29-րդ րոպեներին Գեթին Հիլը երկու անգամ գրավեց Հայաստանի հավաքականի դարպասը:

Հետագայում մեր ֆուտբոլիստները վերականգնեցին հավասարակշռությունը էդգար Հարությունյանի խփած 2 գոլերի շնորհիվ: Մեր հավաքականին հաղթանակ պարգեւեց ավելացված ժամանակում Վարդան Բակալյանի դիպուկ հարվածը:

Խմբում կայացած մյուս խաղում սերբերը 2-0 հաշվով պարտության մատնեցին լիտվացիներին: Այսօր ՀՀ հավաքականը կմրցի սերբերի հետ, որոնք շնորհիվ խփած եւ բաց թողած գնդակների լավագույն տարբերության գլխավորում են աղյուսակը:

Անհաջող տուր

Սանկտ Պետերբուրգում ընթացող շախմատի Միխայիլ Չիգորինի հուշամրցաշարի 4-րդ տուրն անհաջող էր Հայաստանի ներկայացուցիչների համար: Միայն Վլադիմիր Պողոսյանին հաջողվեց հաղթել՝ առավելության հասնելով Կոնստանտին Կոնակինի նկատմամբ: Իսկ ահա Զավեն Անդրեասյանն ու Հովիկ Հայրապետյանն առաջին պարտությունները կրեցին: Զավենը զիջեց ուկրաինացի Վլադիմիր Օնիշչուկին, իսկ Հովիկը պարտվեց Ռեւոլտ Պիմենովին: Մարկ Բասենչյանը ոչ-ոքի խաղաց Սերգեյ Սոլովյովի հետ:

4 տուրից հետո աղյուսակը նույնքան միավորով գլխավորում են ռուսաստանցիներ Դանիել Լինչեւսկին եւ Անդրեյ Ստուկոպինը: Հայաստանի շախմատիստներից 2,5 միավոր ունի Անդրեասյանը, 2-ական միավոր են վաստակել մեր մյուս շախմատիստները:

Հայ ձյուդոյիստները ձախողվեցին

Աբու Դաբիում անցկացված ձյուդոյի Գրան պրիի մրցաշարում անհաջող հանդես եկան հայ ձյուդոյիստները: Մեր չորս մարզիկներից եւ ոչ մեկին չհաջողվեց մեդալ նվաճել: Տղամարդկանց մրցաշարում Հովհաննես Դավթյանը (60 կգ) եւ Արմեն Նազարյանը (66 կգ) 1/8 եզրափակիչում պարտվելով, թողեցին ասպարեզը: Նրանց ճակատագրին արժանացան նաեւ Գայանե Հարությունյանն (48 կգ) ու Ժաննա Ստանկեւիչը (57 կգ):

Հոլկինսը մտադիր չէ հեռանալ ռինգից

29-ամյա ամերիկացի Չեդ Դոուսոնը նվաճեց կիսածանրքաշային կարգում WBC/The Ring-ի վարկածով աշխարհի չեմպիոնի տիտղոսը՝ 2-րդ ռաունդում տեխնիկական նոկաուտով հաղթելով 46-ամյա Բեռնարդ Հոլկինսին: 2-րդ ռաունդում Հոլկինսը գրոհից հետո «կախվել» էր մրցակցից ու երբ վերջինս ուժով հրեց նրան, անհաջող վայր ընկավ ու վնասեց ձեռքը: Շատերն այն կարծիքն էին հայտնել, թե Բեռնարդը ձեւացնում է, սակայն հետազոտությունը ցույց տվեց, որ նա իրոք վնասվածք է ստացել, որի պատճառով չկարողացավ շարունակել հանդիպումը:

Golden Boy կազմակերպության ղեկավար Օսկար Դե լա Հոյան մտադիր է բողոքարկել հանդիպման արդյունքը: Նա գտնում է, որ մենամարտը պետք է չկայացած համարել: Չնայած պարտությանը, Հոլկինսը մտադիր չէ հեռանալ ռինգից եւ իրեն նախկինի պես չեմպիոն է համարում:

ՖԻՖԱ-ն կպարգեւատրի կոռուպցիայի մասին տեղեկացնողներին

ՖԻՖԱ-ն որոշել է պարգեւատրել նրանց, ովքեր կտեղեկացնեն պայմանավորված խաղերի եւ ֆուտբոլում կոռուպցիոն այլ երեւույթների մասին: Իսկ եթե նման տեղեկություններ հաղորդեն պայմանավորված խաղերի մասնակիցները, ապա վերջիններիս ՖԻՖԱ-ն ներում կշնորհի: Այս մասին հայտարարել է ՖԻՖԱ-ի անվտանգության ծառայության պետ Կրիս Իտոնը՝ ելույթ ունենալով ֆուտբոլիստների արհմիությունում: Նա նշել է, որ ֆուտբոլիստների որոշ մասը դեռեւս պատանեկան տարիքից են հանցագործություն կատարում՝ ակումբի ղեկավարության, խաղընկերների, հանցավոր անձանց կամ ընտանիքի անդամների ճնշման տակ համաձայնվելով մասնակցելու պայմանավորված խաղերին: Իտոնի կարծիքով հարկավոր է ՖԻՖԱ-ում ստեղծել տեղեկատվական ցանց, որի միջոցով հնարավոր լինի հետեւել տեղի ունեցող հանցավոր իրադարձություններին:

Հաջորդ տարվա հունվարից ՖԻՖԱ-ն նախատեսում է պարգեւատրման համար հատուկ հիմնադրամ ստեղծել: Բացի այդ, Ինտերպոլի աշխատակիցները պետք է սովորեցնեն, թե ինչպես բացահայտեն հանցագործությունը եւ ժամանակին նախատեսվող միջոցառման մասին տեղեկացնեն ՖԻՖԱ-ին: Հիշեցնենք, որ այս տարի ֆուտբոլում կոռուպցիայի հետ կապված մի քանի աղմկահարույց գործեր բացվեցին Թուրքիայում եւ Իտալիայում:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Օրվա հետքերով

Քրդական «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության պատգամավորը Հայոց ցեղասպանության մասին

Նա ընդունում է քրդերի պատասխանատվությունը հայկական կոտորածներում

«Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությունը Թուրքիայի ազգային մեծ ժողովի՝ Մեջլիսի վերջին ընտրություններում ստացած ձայների քանակով մյուս բոլոր կուսակցություններին գերազանցել է երկրի քրդաբնակ հարավարեւելյան շրջաններում, այսինքն՝ քրդական կուսակցություն է: Թեեւ կալանված լինելու պատճառով նրա առաջադրած պատգամավորներից 8-ը զրկվել են մանդատից, սակայն կուսակցությունը ունենալով 26 պատգամավորական տեղեր՝ խորհրդարանական խմբակցություն է կազմել Մեջլիսում:

Թուրքական իշխանությունները, քաղաքական կուսակցությունները «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությանը հաճախ մեղադրում են PKK-ին ծառայելու եւ այս կառույցի անջատողական նկրտումները թուրքական Մեջլիսում խորհրդարանական կարգավիճակով պաշտպանելու, թերեւս դրանով էլ երկրում ահաբեկչությունը խթանելու մեջ:

Գալով «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցությանը, որքան էլ նա ստացած տեղերի քանակով ամենասակավաթիվ խմբակցությունն ունենա Մեջլիսում, այնուամենայնիվ, կարողանում է ընդդիմանալ ինչպես վարչապետ Էրդողանի իշխող «Արդարություն եւ բարգավաճում», վերջինի հետ նաեւ Ժողովրդա-հանրապետական ու «Ազգայնական շարժում» կուսակցություններին, այնպես էլ՝ թուրքական պետությանը՝ դատապարտելով վերջինի ոչ թուրք բնակչությանը հալածելու ավանդական քաղաքականությունը:

Դա պատահական չէ, այլ՝ պայմանավորված է Թուրքիայում բնակչության 1/4-ը կազմող քրդերի աջակցությամբ, PKK-ի ավելի քան 30 տարվա վաղեմություն ունեցող զինված գործունեությամբ, երկրում քրդական հարցի հրապայությամբ, ինչպես նաեւ Իրաքի գլխավորությամբ հարեւան երկրներում, հետեւաբար եւ տարածաշրջանում քրդական գործոնի, հատկապես հակաիրաքյան 2-րդ պատերազմից հետո աննախադեպ ակտիվացմամբ:

Այլ կերպ, «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության գործունեությունը կարեւոր է ոչ միայն Թուրքիայում քրդական հարցի եւ քուրդ բնակչության ոտնահարված իրավունքների, այլեւ Մեջլիսում «գորշ գայլերի» քաղաքական կազմակերպության՝ «Ազգայնական շարժում» կուսակցության ազգային փոքրամասնությունների, էթնիկ եւ կրոնական խմբավորումների նկատմամբ անհանդուրժողական եւ ատելության դրսեւորումները զսպելու եւ երկրում առկա տաբուները վերացնելու առումներով:

Այդ տաբուների մեջ առանձնակի տեղ ունի Հայոց ցեղասպանությունը: Նախորդ նստաշրջանում քրդական այս կուսակցության պատգամավորը, կարծես համանախագահ տիկին Թուղուքն էր, Մեջլիսի ամբիոնից հաստատել է ցեղասպանության փաստը՝ իր վրա գրավելով մյուս խմբակցությունների կատաղի զայրույթը:

Նրա օրինակին հետեւել է «Խաղաղություն եւ ժողովրդավարություն» կուսակցության Դիարբեքիրի պատգամավոր Ալթան Թանը: Ինչպես հոկտեմբերի 17-ին նշել է stratejikboyut.com կայքէջը, մասնակցելով Մարտինի համալսարանի կազմակերպած միջազգային գիտաժողովին, Թանը ելույթ է ունեցել եւ հայտարարել է. «Նախորդ դարում տեղի է ունեցել 1915-ի Հայոց ցեղասպանությունը: Թող արձանագրեն, որպես քաղաքական գործիչ, ես ցեղասպանություն բառն եմ օգտագործում»:

Թանը Մարտինի համալսարանում Թուրքիայի ազգային մեծ ժողովի պատգամավորի կարգավիճակով ունեցած աղմկահարույց ելույթի մասին նշված կայքէջին պարզաբանումներ է տվել, մասնավորապես ասելով, որ հայ ժողովուրդը ցեղասպանության է ենթարկվել Օսմանյան Թուրքիայում, դրա գլխավոր պատասխանատուն «Իթթիհադ վե Թերաքքիի» պարագլուխներն են: Այդ ժամանակահատվածում, նշել է նա, կոտորած են իրականացրել նաեւ հայ կոմիտաջիները, արա եւ շարունակել. «Պետք է հրաժարվել «իմ մարդասպանը լավն է, իսկ քոնը՝ վատ» մոտեցումից: Պետք է բոլորի վիշտն արտահայտող ընդհանուր հուշարձան կառուցել եւ ներողություն խնդրել կատարվածի համար»:

Այնուհետեւ նա անդրադարձել է 1915-ի հայոց եւ ասորիների ցեղասպանության մեջ քրդերի պատասխանատվությանը, ընդգծելով. «Պատճառաբանելով, թե ամեն ինչ արել է «Իթթիհադ վե Թերաքքիին», պետությունը, քրդերը չեն կարող արդարանալ: Թեեւ քուրդ ժողովուրդն ամբողջությամբ սուրը ձեռքին ցեղասպանության չի մասնակցել, սակայն ցեղասպանության համար քուրդ առաջնորդները լուրջ պատասխանատվություն են կրում: Ոմանք ասում են, որ 1915-ի իրադարձությունները չեն համապատասխանում ցեղասպանության միջազգային բնորոշումներին, հետեւաբար խնդիրը ոչ թե ցեղասպանությունն է, այլ՝ տեղահանությունը: Սակայն ես հարցին այլ կերպ եմ մոտենում: Տվյալ ժամանակահատվածում մեր տարածքն ուներ 13 միլիոն բնակչություն, իսկ հայերը 1 միլիոն 200 հազար էին: Այսինքն՝ նրանք կազմում էին երկրի ընդհանուր բնակչության 10 տոկոսը: Ներկայումս նրանց թիվը 40 հազար է Թուրքիայում: Որտե՞ղ են հիմա այդ հայերը: Ասում են, թե անհետ կորել են, համաձայնի զոհ դարձել, ճանապարհին մահացել կամ արտագաղթել են: Ոչ ոք առանց պատճառի տունը, տեղը, ունեցվածքը չի թողնի-գնա: 1915-ին հայերի գերակշռող մասը սրախողխող է արվել: Ոմանք սպանված հայերի թիվը ներկայացնում են 100 հազար, ոմանք էլ՝ 300 հազարի հասցնում: Իմ կարծիքով՝ թիվը էական չէ: Մի՞թե քիչ է նույնիսկ 100 հազարը: Կարո՞ղ է արդարացնել մեզ»:

Հ. ՉԱՔԲՅԱՆ

Սիրիայում ծայրահեղականները զինված են իսրայելական ինքնաձիգներով

Արաբական պետությունների լիգայում Սիրիայի ներկայացուցիչ Յուսուֆ Ահմադը հայտարարել է, որ իշխանությունները ծայրահեղականներից առգրավել են իսրայելական արտադրության ինքնաձիգներ: Ահմադի հայտարարությունն արվել է Կահիրեում անցկացվող լիգայի գագաթաժողովում: Այդ մասին հաղորդում է «Թեհրան թայմս» թերթը:

Յուսուֆ Ահմադի խոսքերով՝ սիրիական վարչակարգի թշնամիները օգտագործում են իսրայելական զենք, եւ իշխանություններն ունեն համապատասխան ապացույցներ: Ահմադը ընդգծել է, որ հարյուրավոր սիրիացիներ սպանվել են «իսրայելական ինքնաձիգներով զինված ահաբեկիչների» գործողությունների հետեւանքով:

«Ազգը» գրել է լիգայի գագաթաժողովում Սիրիայի իշխանությունների եւ ընդդիմության երկխոսությանն օժանդակող հանձնախմբի ստեղծման մասին: Վերջին տեղեկությունների համաձայն, տվյալ նախաձեռնությունը, սակայն, մերժել են թե՛ պաշտոնական Դամասկոսը եւ թե՛ ընդդիմությունը:

Իրավապաշտպան կազմակերպությունները երեկ հայտարարել են, որ հոկտեմբերի 17-ին Սիրիայի Հոմս քաղաքում գնդակահարվել են սիրիական բանակի 5 զինվորներ: Չորս ուրիշ զինծառայողներ զոհվել են Իդլիբի նահանգում ֆուգասի պայթյունից:

«Ազատ Եվրոպա» ռադիոկայանը հավելում է, որ Հոմսի բնակելի թաղամասերից մեկում զինվորականների հրաձգության հետեւանքով սպանվել է մեկ մարդ, վեց ուրիշներ վիրավորվել են:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ս.թ. հոկտեմբերի 26-ին, ժամը 14:00-ին ՀՀ Այուսիրի մարզի Լեհվազի գյուղապետարանում տեղի կունենան «Սար-Ռուբ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված «Նժդեհ» ՓՀԷԿ-ի կառուցման փաստաթղթերի շրջակա միջավայրի վրա ազդեցության վերաբերյալ հասարակական լսումներ:

Տեղեկությունների համար դիմել գ. Երեւան, Կոմիտասի 29

հեռ. 220218, 221485, 221568, 091402223

Վաճառվում է

LADA Priora

մակնիշի ավտոմեքենա, 2008 թվականի արտադրության, 2010 թվականի վաճառք: Գտնվում է գործարանային երաշխիքի մեջ: Վազքը՝ 13 000 կմ, գույնը՝ սեւ մետալիկ, հեչբեք: Ունի՝ կոնդիցիոներ, անվտանգության բարձիկ, բորտ համակարգիչ, հայելիների եւ ապակիների (մուգ) էլեկտրոնային կարգավորում, բարձրակարգ աուդիո համակարգ՝ Bluetooth-ով եւ iPhone/iPod միացումով: Տրվում են նաեւ 4 ձմեռային անվադողեր՝ համարյա նոր վիճակում:

Հեռ.՝ (094) 401-337

CNN

Ջոն Մակքեյն. «Օբաման կարող է երկիրը ներքաշել նոր պատերազմի մեջ»

Սենատոր Ջոն Մակքեյնը հայտարարել է, որ ամերիկացի 100 զինծառայող Ուգանդա ուղարկելու նախագահ Բարաք Օբամայի որոշումը կարող է ի վերջո երկիրը ներքաշել նոր պատերազմի մեջ: Մակքեյնի հայտարարությունը հեռարձակվել է CNN հեռուստաընկերության եթերում:

Սենատորը հիշեցրել է, որ Աֆղանստանում արդեն գտնվում են մոտ 100 հազար ամերիկացի զինծառայողներ, իսկ Իրաքից զորքերի դուրսբերումը դեռ չի ավարտվել: Նրա խոսքերով, ԱՄՆ-ը կարող է հայտնվել այնպիսի իրավիճակում, որից չի կարողանա դուրս գալ:

Մակքեյնը, որը 2008-ի նախագահական ընտրություններում Օբամայի ախոյանն էր, դժգոհություն է արտահայտել, որ նախագահը Ուգանդա զորք ուղարկելու որոշումն ընդունել է առանց սանալու Կոնգրեսի հավանությունը: «Ես հիշում եմ Սոմալիի դեպքերը, հիշում եմ Լիբանանը», ասել է Մակքեյնը: Սոմալիի հակամարտությանը միջամտելու անհաջող փորձից հետո ԱՄՆ-ը ստիպված էր եղել այնտեղից զորքը դուրս բերել 1994-ին, իսկ Լիբանանից՝ 1984-ին:

Ի դեպ, սենատոր Մակքեյնը հայտնի է որպես Իրաքի պատերազմի առավել հետեւողական կողմնակիցներից մեկը:

Հոկտեմբերի 14-ին Կոնգրեսին գրած նամակում Օբաման հայտարարել էր 100 զինծառայող Ուգանդա ուղարկելու իր մտադրության մասին: Նախագահի խոսքերով, ամերիկացիները միայն խորհրդակցի դեր կկատարեն Ուգանդայի կառավարական զորքերում, նրանց օգնելով Ջոզեֆ Կոնիի «Տիրոջ դիմադրության բանակ» ապստամբական խմբավորման դեմ մղվող պայքարում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Ս.թ. հոկտեմբերի 19-ին, ժամը 13:00-ին Երեւանի քաղաքային պանթեոնում (Թոխմախ, մուտքը Գաջի գործարանի կողմից) տեղի կունենա երջանկահիշատակ ֆրանսիացի քաղաքական գործիչ Անրի Սաբիի հուշարկավորությունը:

Անրի Սաբին Հայ դատի նվիրյալ քաղաքական գործիչներից էր, որոնք իրենց ամբողջ կյանքի քաղաքական գործունեության առանցքը դարձրել էին Հայաստանի, Արցախի եւ հայության իրավունքների պաշտպանությունը: Իր կտակի համաձայն, մարմինն ամփոփող աճյունասափորները կթաղվեն Երեւանում եւ Արցախում:

Ակնկալում ենք Ձեր մասնակցությունը Երեւանյան հուշարկավորության արարողությանը:

Հուշարկավորության սկիզբը ՀՅԴ Գերագույն մարմնի շենքից ժամը 12:30-ին (հասցե՝ Հանրապետության 30, հեռ. 52-15-02):

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ հատուկ ինչական ծառայության հատկապես կարեւոր գործերի քննիչի մեկ թափուր պաշտոնի համար անցկացվող բաց մրցույթի մասին

Պաշտոն զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների եւ աշխատանքային ունակությունների վերաբերյալ ներկայացվող պահանջները.

1. Հատուկ ինչական ծառայությունում ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվող, Հայաստանի Հանրապետությունում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի բարձրագույն իրավաբանական կրթության որակավորման աստիճան կամ նմանատիպ աստիճան օտարերկրյա պետությունում ձեռք բերած, որի ճանաչումն ու համարժեքության հաստատումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է օրենքով սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության 60 տարին չլրացած այն քաղաքացին, ով՝

ա) անցել է պարտադիր զինվորական ծառայություն (բացառությամբ իգական սեռի անձանց) կամ պահեստազորի սպա է,

բ) տիրապետում է գրական հայերենին:

2. Չունի Հայաստանի Հանրապետության կառավարու թյան 2008թ. փետրվարի 13 թիվ 143-Ն որոշմամբ հաստատված ցանկով հատուկ ինչական ծառայության ծառայողի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատներն եւ հիվանդությունները:

3. Հատուկ ինչական ծառայության պաշտոնի կարող են նշանակվել նաեւ 1-ին մասի «ա» ենթակետի պահանջներին չհամապատասխանող, սակայն դիմելու պահին «Զինապարտ տու թյան մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «բ-ե» կետերով նախատեսված հիմքերով պարտադիր զինվորական ծառայությունից ազատված կամ 13-րդ հոդվածի համաձայն՝ մինչեւ 27 տարին լրանալը պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում ստացած եւ պահեստազորում հաշվառված անձինք:

4. Հատուկ ինչական ծառայությունում ծառայության չի կարող անցնել այն քաղաքացին, ով՝

ա) մինչեւ նշանակումը չունի դատախազի կամ ինչիչի առնվազն 3 տարվա ստաժ,

բ) դատական կարգով ճանաչվել է անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

գ) դատական կարգով զրկվել է քաղաքացիական կամ այլ ծառայությունում պաշտոն զբաղեցնելու իրավունքից,

դ) դատապարտվել է հանցագործություն կատարելու համար՝ անկախ դատվածությունը սահմանված կարգով հանված կամ մարված լինելու հանգամանքից,

ե) գտնվում է քրեական հետապնդման մեջ,

զ) չի համապատասխանում 1-ին կետով սահմանված պահանջներին:

5. ՀՀ հատուկ ինչական ծառայության հատկապես կարեւոր գործերի ինչիչի թափուր պաշտոնը համալրելու համար ներկայացվող փաստաթղթերը՝

ա) դիմում՝ ուղղված Հայաստանի Հանրապետության հատուկ ինչական ծառայության պետին.

բ) անձը հաստատող փաստաթուղթ եւ պատճենը,

գ) բարձրագույն իրավաբանական կրթության առկայությունը հավաստող փաստաթուղթ եւ պատճենը,

դ) աշխատանքային գրքույկ եւ պատճենը կամ քաղվածք,

ե) «Հատուկ ինչական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված կարգով պարտադիր զինվորական ծառայություն անցած լինելը կամ պարտադիր զինվորական ծառայությունից ազատված լինելը կամ տարկետում ունենալը հավաստող փաստաթուղթ եւ պատճենը (եթե հավակնորդը արական սեռի է):

զ) Տեղեկանք՝ ինչիչի պաշտոնում նշանակմանը խոչընդոտող ֆիզիկական արատների եւ հիվանդությունների բացակայության մասին՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. փետրվարի 13 թիվ 143-Ն որոշման,

է) հայտարարություն դատվածության վերաբերյալ,

ը) երկու լուսանկար՝ 3x4 չափսի

Հավակնորդը փաստաթղթերը ներկայացնում է անձամբ:

Բաց մրցույթն անցկացվում է հարցազրույցի եղանակով, որն իրականացվում է հատուկ ինչական ծառայության պետի կողմից հաստատված՝ ծառայության ծառայողների ատեստավորման ծրագիր-հարցաշարի հիման վրա

Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետ է համարվում 2011թ. նոյեմբերի 11-ը:

Մրցույթն անցկացվելու է 2011թ. նոյեմբերի 21-ին՝ ժամը 11:00-ին,

ՀՀ գլխավոր դատախազության շենքում՝ /Վ.Սարգսյան 5/,

ՀՀ հատուկ ինչական ծառայություն (5 –րդ հարկ):

Մրցույթի նախապատրաստական աշխատանքներն իրականացնում է ՀՀ հատուկ ինչական ծառայության աշխատակազմի անձնակազմի բաժինը /հեռ. 511-662, 511-684/

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունէութիւն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետութեան 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրուած՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրուած է տպագրութեան՝18.10.2011, գինը՝ 100 դրամ, տպագրում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: